ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Շահումյան 20/32, 3301:
Հեռ.՝ (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1791: **Գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

Սյունյաց Երկիր

ՇԱԲԱԹ, 30 ՀՈՒՆՎԱՐԻ 2016Թ.
№ 3 (379)
www.syuniacyerkir.am

Երկիր ունեմ- չեմ ճանաչում, պատմություն ունեմ- չեմ ճանաչում, ժողովուրդ ունեմ- չեմ ճանաչում, գրականություն ունեմ- չեմ ճանաչում, լեզու ունեմ- չեմ իմանում:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՓԱՐՎԱՆՅԱՆ. «Թող թնդանոթներն ու մյուս զինապեսակները կրակեն միայն զորավարժարաններում»

Հարցազրույց ՀՀ զինված ուժերի 1-ին բանակային կորպուսի հրամանատար, գնդապետ Տիգրան Փարվանյանի հետ

4

Մարզային փրկարարական վարչությունն ամփոփեց 2015-ը

Հունվարը նախորդ տարվա կատարվածն ամփոփելու, թերությունները վեր հանելու, անելիքները նախանշելու ամիս է: Մարզպետարանում հունվարի 15-ին տեղի ունեցավ Սյունիքի մարզային փրկարարական վարչության 2015թ. գործունեության արդյունքների ամփոփմանը նվիրված նիստ, որին մասնակցում էին ՀՀ տարածքային կառավարման եւ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարարական ծառայության տնօրենի տեղակալ, փրկարարական ծառայության գեներալ-մայոր Աստվածատուր Պետրոսյանը, փոխնախարար Արտաշես Բախշյանը, մարզպետի տեղակալներ Վաչե Գրիգորյանը եւ Վարդան Դավթյանը, քաղաքապետեր, փրկարարական ծառայության մարզային ստորաբաժանումների ղեկավարներ, հրշեջ-փրկարարներ՝ մարզի տարբեր տարածաշրջաններից:

Հաշվետու ժամանակաշրջանի գործունեության հիմնական ուղղությունները թվարկելուց հետո Սյունիքի մարզային փրկարար վարչության պետ, փոխգնդապետ Բագրատ Զաքարյանն այնուհետեւ թվական եւ փաստական տվյալներով ներկայացրեց 2015թ. մարզում տեղի ունեցած արտակարգ իրավիճակների, դեպքերի եւ պատահարների վերլուծությունը՝ դրանք բաղդատելով 2014 թվականի հետ, որին հընթացս կարելի էր ծանոթանալ մեծադիր էկրանին:

Այսպես, մարզում 2015-ին արձանագրվել է 757 դեպք ու պատահար՝ 200-ով ավելի, քան նախորդ տարում: Հրդեհների թիվը նախորդ տարվա համեմատ եւս աճել է 87-ով, ընդ որում՝ 2015-ին հրդեհի հետեւանքով եղել է երկու զոհ, վեց վիրավոր: Քանակական աճ է գրանցվել նաեւ ճանապարհատրանսպորտային պատահարների դեպքում՝ 28 զոհ, 70 վիրավոր, 19 զոհ, 65 վիրավոր 2014-ին: Բնածին աղետների դեպքում (փլուզում եւ սողանք) թվական տվյալների առումով հավասարություն է: Կենցաղային կանչերի պարագայում եւս քանակական աճ է գրանցվել, բայց տուժած բնակիչների թվով նվազում է արձանագրվել: Սոցիալ-կենցաղային բնույթի 207 դեպք է եղել (11 տուժած), որը կազմում է ընդհանուր արտակարգ իրավիճակների դեպքերի 27,3 տոկոսը (2014 թվականին՝ 147 դեպք): Հաշվետու ժամանակաշրջանում գրանցվել է որոնողափրկարարական աշխատանքների կազմակերպման չորս դեպք, եղել է երկու զոհ, կեղծ ահազանգի 11 դեպք: Սոցիալ-կենցաղային դեպքերը 2014թ. նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են 60-ով: Բանախոսը հաշվետվության մեջ անդրադարձավ մարզում գրանցված ականի հայտնաբերման, արտադրական վթարներին, վայրի կենդանիների հասցրած վնասներին, օձի եւ կարիճի խայթոցներին եւ այլ արտակարգ իրավիճակների եւ դեպքերի:

Հաշվետվության մի ստվար հատվածը վերաբերում էր բնակչության պաշտպանության համակարգի օպերատիվ նախապատրաստմանը, քաղաքացիական պաշտպանության համակարգի նախապատրաստմանն ուղղված միջոցառումներին, փրկարարական ուժերի պատրաստականության բարձրացմանը, անձնակազմի կառավարմանը:

Մասնավորապես նշվեց, որ Շվեյցարիայի

էջ 3

«Եվս մի քիչ, եւ ամեն ինչ լավ է լինելու»

ՌԵԴԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Մտորումներ

Մտորումներս մեր փոքր ժողովրդի հոծ խմբերի շարժի (ներգաղթի ու արտագաղթի), դարձյալ ու դարձյալ կրթության, մասնավորապես «կայացած» դպրոցի, երկրի կառուցվածքի ու հայրենասիրության, մեր առօրյա կյանքում հանդիպող դժվարությունների մասին են:

Առաջին հայացքից թվում է, թե թվարկած հարցերն իրար հետ կապ չունեն: է, չէ, կապ ունեն, կապված են, եւ այն էլ ամուր թելերով, նույնիսկ կարելի է ասել՝ դրանք միահյուսված են:

Հայ ժողովուրդն իր բնօրրանից ունեցել է առնվազն չորս մեծ արտագաղթ:

Առաջինը եղել է Անիի կործանումից հետո: Պատմական փաստեր կան այն մասին, որ այդ ժամանակներում տուն ու տեղից, հայրենիքից հեռանում էին նույնիսկ ամբողջական իշխանական տոհմեր՝ իրենց շարժական ինչքով: Դրա պատճառը կամ մեղավորները թուրք-սելջուկներն էին:

Երկրորդը Շահ Աբասի «մեծ սուրգունն» էր 17-րդ դարասկզբին:

Երրորդ արտագաղթը սկսվել է 19-րդ դարի վերջերին՝ սուլթան Համիդի օրոք եւ շարունակվել մինչեւ 20-րդ դարի 20-ական թվականները: Սրա մեղավորներն էլ սելջուկներից սերվածներն էին՝ թուրքերը:

Չորրորդը, որ սկսվել է 20-րդ դարի 90-ական թվականներին, շարունակվում է ցայսօր:

Առաջին երեքի ժամանակ մենք հայրենիք ունեինք, բայց պետականություն, պետություն՝ ոչ: Այսօր արտագաղթը պետականություն ունեցող մայր հայրենիքից է: Բա սրա մեղավորներն ովքե՞ր են:

Մտորումների ընթացքում արտագաղթի հարցին հպանցիկ էլի կանդրադառնանք: Այժմ մի երկու խոսք ներգաղթի մասին:

Խորհրդային տարիներին մի քաղաքական անեկդոտ էին պատմում: Կուսակցության համագումարներից մեկի ժամանակ Ստալինն իր զեկուցման մեջ նշում է, որ խորհրդային երկրի ժողովուրդն օր-օրի ավելի լավ է ապրում: Դահլիճում նստածներից մեկը հարցնում է՝ եթե լավ ենք ապրում, ապա ինչո՞ւ խանութներում միս, կարագ, բրինձ ու շաքար չկա, ուտելու բան չկա: Նախագահությունից՝ հարցին կպատասխանենք ընդմիջումից հետո: Ընդմիջումից հետո հարց տվողի հարեւանն է ոտքի կանգնում, թե՝ ինձ չի հետաքրքրում՝ ինչու խանութներում ուտելիք չկա: Ես ուղղակի ուզում եմ իմանալ, որտե՞ղ է ընդմիջումից առաջ հարց տվող իմ կողքի ընկերը:

Հիմա, ես ուզում եմ իմանալ, որտե՞ղ է Ադրբեջանի մոտ կես միլիոնանոց հայկական

էջ 5

Մարզում գրիպով եւ սուր շնչառական վարակներով հիվանդների թիվը զգալիորեն նվազել է

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Սյունյաց երկիր» թերթի կայքէջում հունվարի 15-ին հրապարակված «Երկրում համաճարակ չկա, եւ համաճարակաբանական վիճակը վերահսկելի ու կառավարելի է» վերնագրով նյութում մարզում գրիպով եւ սուր շնչառական վարակներով հիվանդների մասին խոստացել էինք տեղեկատվություն ներկայացնել թերթի առաջիկա հրապարակման մեջ:

Ինչպես նկատվում է առողջապահության նախարարության պաշտոնական տվյալներից, հանրապետությունում գրիպի եւ սուր շնչառական վարակների թվի նվազում է նկատվում: Ստացիոնար բուժում ստացած շատ հիվանդներ ապաքինմամբ դուրս են գրվել: Նկատի ունենալով, որ հունվարի 20-ից հետո արձանագրվել է սեզոնային գրիպի եւ սուր շնչառական վարակների դեպքերի նվազման միտում, ներկայումս անվճար բուժօգնություն կարող են ստանալ միայն ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N318-Ն որոշման հավելված 1-ով սահմանված՝ բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում ընդգրկված քաղաքացիները, ինչպես նաեւ անհետաձգելի բուժօգնություն պահանջող՝ ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի N65-Ն հրամանով հաստատված հիվանդությունների եւ վիճակների ցանկերում ընդգրկված ախտորոշումներով անձինք:

Մարզի բժշկական կենտրոններից տեղեկացանք, որ հիվանդների թվի զգալի նվազում է նկատվում: Հունվարի 27-ի դրությամբ Գորիսի բժշկական կենտրոնում ձմեռային տարեշրջանում սուր շնչառական հիվանդացությամբ հոսպիտալացվել է 69 հիվանդ՝ 0-18 տարեկանների գերակշռությամբ, 4 թոքաբորբով: Խոզի գրիպի դեպք չի արձանագրվել, ծայրահեղ ծանր վիճակում հիվանդներ չեն եղել: Կենտրոնի բուժական գծով փոխտնօրեն Լեւոն Հարությունյանի տեղեկացմամբ՝ տնային այցերի դեպքում միայն մեկ օր է եղել, որ 50 դեպք է արձանագրվել, մնացած օրերին՝ միջինը 15-20: **«Կարծում եմ՝ բնակչության դիմելիության թվի աճ է նկատվել ոչ այնքան պայմանավորված հիվանդության լայնամասշտաբայնությամբ, այլ նաեւ զգուշության նկատառումներից ելնելով»**, – նշեց Լ.Հարությունյանը:

Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոնի տնօրեն Լուսինե Վարդանյանի տեղեկացմամբ՝ հունվարի 27-ի դրությամբ հոսպիտալացված 37 հիվանդ են ունեցել, որից 4 հոգի շարունակում է ստացիոնար բուժում ստանալ: Մինչեւ հունվարի 15-ը գերակշռել են 0-18 տարեկան հիվանդները, հետագայում պատկերը փոխվել է: Ընդհանուր առմամբ ստացիոնար բուժում է ստացել 0-18՝ 21 հոգի, 18-ից բարձր՝ 16: Ստացիոնար բուժում է ստացել երկու հղի, որոնք արդեն ապաքինվել են: Հունվարի 1-ից 27-ն ընկած ժամանակահատվածում արտահիվանդանոցային կամ պոլիկլինիկական 381 հիվանդ է գրանցվել, որից 0-18՝ 197, 18-ից բարձր՝ 184 հիվանդ: **«Չնայած հունվարի 20-ից հետո բնակչության որոշ սոցիալական խմբերի համար է միայն գործել պետպատվերը, բայց մենք անվճար բուժօգնություն ենք ցուցաբերում նաեւ նրանց, որոնք վճարունակ չեն: Ընդհանուր առմամբ պիտի նշեմ, որ այս ժամանակահատվածում ծանր վիճակով հիվանդ չենք ունեցել»**, – նշեց կենտրոնի տնօրենը:

Կապանի բժշկական կենտրոնի ինֆեկցիոն բաժանմունքի վարիչ Սիդա Բադալյանը մանրամասն ներկայացրեց այս ամբողջ ժամանակահատվածում սուր շնչառական վարակներով դիմած հիվանդների վիճակը: Հունվարի 27-ի դրությամբ սուր շնչառական վարակներով հոսպիտալացվել է 137 հիվանդ, որից 31-ը՝ թոքաբորբ (10 հոգի՝ 0-18 տարեկան, 21-ը՝ 18-ից բարձր): Դեռեւս շարունակում է բուժում ստանալ 42 հիվանդ, ըստ որում՝ 8-ը՝ թոքաբորբով, 29-ը՝ սուր շնչառական վարակով հիվանդ, 5 հոգի վերակենդանացման բաժանմունքում է: Վերակենդանացման բաժանմունքում գտնվող հիվանդների վիճակը ծանր է, բայց արհեստական շնչառական ապարատին միացված հիվանդ չունեն: Այդ հինգ հոգուց 4-ը ծանր թոքաբորբով է, բայց նրանց վիճակում դրական դինամիկա է նկատվում, իսկ մեկ հիվանդ՝ մենինգոէնցեֆալիտ ախտորոշմամբ: Այս ժամանակահատվածում ստացիոնար բուժում է ստացել 4 հղի, որից մեկը՝ թոքաբորբ, որոնք բավարար վիճակով դուրս են գրվել հիվանդանոցից: Արտահիվանդանոցային կամ պոլիկլինիկական դիմելիությունը կազմել է շաբաթական մոտ 300 այց, 80-90 տնային կանչ (օրական միջինը՝ 11-12 տնային կանչ): Իսկ շտապօգնության սուր շնչառական վարակներով հիվանդների կանչերը եղել են միջինը՝ օրական 10-11, վերջին շաբաթում՝ 4-5 հոսպիտալացումով:

Բժշկուհի Սիդան նշեց նաեւ, որ Կապանի բժշկական կենտրոնում կատարվում է համապատասխան նմուշառությունը՝ գրիպ Ա-ի հարուցիչը որոշելու նպատակով: Հունվարի 27-ի դրությամբ 43 նմուշառությունից 19-ի մոտ հայտնաբերվել է հարուցիչը, այդ թվում՝ չորս հղի, որոնցից 2-ը հոսպիտալացվել է, երկուսի վիճակը թեթեւ է եղել, եւ հոսպիտալացման կարիք չի եղել: Գրիպ Ա-ից, այդ թվում՝ H1N1 վիրուսից պաշտպանվելու եւ այդ հիվանդության դեմ պայքարելու հիմնական՝ ԱՆ-ից ստացված «Տամիֆլյու» դեղամիջոցի ծախսի եւ առաջիկա պահանջարկի վերաբերյալ բժշկական կենտրոնն ամենօրյա հաշվետվություն է ներկայացրել համապատասխան մարմիններին: Ներկայումս կենտրոնն ունի համապատասխան չափաքանակ, եւ բոլոր հիվանդներին բժշկական ցուցման դեպքում տրվում է անվճար:

Դեղամիջոցը հնարավոր է ձեռք բերել նաեւ դեղատներից: Ի դեպ, «Տամիֆլյու»-ի տուփը՝ միջինը 11.500 դրամ է:

Բժշկուհին նշեց նաեւ, որ, ճիշտ է, դիմելիությունը նվազել է, բայց ծանր վիճակով հիվանդների թիվն է ավելացել: **«Ինֆեկցիաների դեպքում սովորաբար այդպես է լինում. կանչերը պակասում են, ծանր դեպքերը՝ ավելանում, որ հիմնականում պայմանավորվում է ուշացած դիմելիությամբ»**, – եզրափակեց նա:

«Այս ողջ ժամանակահատվածում առողջապահության նախարարությունից հրամաններ, հրահանգներ, տարբեր ուղեցույցներ ենք ստացել, դեղորայքի դեֆիցիտ չի եղել, հունվարի 28-ի դրությամբ որեւէ պրոբլեմի առաջ չենք կանգնել: Հոսպիտալացված հիվանդների բուժումն իրականացվել է անվճար», – տեղեկացրեց Սիսիանի բժշկական կենտրոնի տնօրեն Սվետլանա Իսախանյանը: Նա նշեց, որ հունվարի 27-ի դրությամբ սուր շնչառական վարակներով հոսպիտալացվել է 36 հիվանդ, որից 3 հոգի (1 հոգի՝ թոքաբորբով հիվանդ, 2 հոգի մանկական բաժանմունքում, վիճակը բավարար է) դեռեւս շարունակում է ստացիոնար բուժումը: Հունվարի 28-ին պոլիկլինիկա դիմել է մեկ հոգի, շտապօգնության՝ սուր շնչառական վարակով՝ մեկ հոգի: Հունվարի 27-ի դրությամբ 71 շտապօգնության կանչ է գրանցվել, որից 20 հոգի՝ 0-18 տարեկան, 51-ը՝ 18-ից բարձր, որից 42-ը՝ սուր շնչառական վարակով, 6-ը՝ թոքաբորբով, 3 հղի՝ սուր շնչառական վարակով:

Տնօրենի տեղեկացմամբ՝ ծանր վիճակում երեք հիվանդ են ուղարկել մայրաքաղաք: Պոլիկլինիկա այդ հիվանդությամբ դիմել է 314 մարդ, որից 159 հոգի՝ 0-18 տարեկան, 155՝ 18-ից բարձր: Թե՛ ամբուլատոր-պոլիկլինիկական, թե՛ ստացիոնար բժշկական հաստատությունները դեղորայքով լիարժեք ապահովված են:

Քաջարանի բժշկական կենտրոնի բուժական գծով փոխտնօրեն Վիրաբ Մանասյանից տեղեկացանք, որ հունվարի 27-ի դրությամբ սուր շնչառական վարակով հոսպիտալացվել է 13 հիվանդ (9 հոգի՝ 0-18 տարեկան), որից 7 հոգի՝ սուր շնչառական վարակով, 6 հոգի՝ թոքաբորբով: Երկու հոգի ծանր վիճակով տեղափոխել են Կապանի բժշկական կենտրոն, եւ նրանց վիճակն արդեն բավարար է: Այս պահին նման ախտորոշմամբ ստացիոնար բուժում ստացող հիվանդ չկա: Վ.Մանասյանը տեղեկացրեց, որ բուժումը կատարվել է պետպատվերի շրջանակներում: ■

«Պատվավոր սյունեցու» կոչում է շնորհվել գեներալ-լեյտենանտ Էդիկ Բարսեղյանին

Հունվարի 11-ին Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի հրավերով Սյունիքի մարզպետարան էր այցելել գեներալ-լեյտենանտ, 2000-2004թթ. Սյունիքի մարզպետ Էդիկ Բարսեղյանը, որին շնորհվել է «Պատվավոր սյունեցու» կոչում:

ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի խոսքով՝ կոչումը գեներալ-լեյտենանտին շնորհվում է Արցախյան ազատամարտի ընթացքում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի սահմանների պաշտպանության ակտիվ մասնակցության եւ մարզի զարգացման գործում մատուցած ծառայությունների համար: Մարզպետը նաեւ նշեց, որ այս կոչումը նույնիսկ ուշացած կարելի է համարել, քանի որ Էդիկ Բարսեղյանը Սյունիքի նկատմամբ իր բարյացակամ վերաբերմունքով ու հարգանքով միշտ էլ ոգեւորել է սյունեցիներին:

Էդիկ Բարսեղյանն իր երախտագիտությունը հայտնեց եւ նշեց, որ բազմաթիվ պարգեւներ է ստացել, բայց ամենաթանկ ու կարեւոր կոչումը շնորհվեց այսօր: Նա հավելեց, որ իսկապես մեծ պատիվ է եւ միեւնույն ժամանակ պարտավորեցնող, նույնիսկ ավելին, քան ամբողջ ծառայողական գործունեության համար ստացած որեւէ պարգեւ: Էդիկ Բարսեղյանը նաեւ հավաստիացրեց, որ իր հնարավորությունների սահմաններում այսուհետ էլ շարունակելու է նպաստել մարզի բարօրությանը:

Սյունիքի մարզպետարան

Կրելով հայոց բանակի համազգեստը

Դավիթ Հարությունյանը 2013-ին բարձր առաջադիմությամբ ավարտել է Արծվանիկի միջնակարգ դպրոցը, ընդունվել Երեւանի պետհամալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի միջազգային հարաբերությունների բաժինը: 2015-ի հունվարին համալրեց հայոց ազգային բանակի շարքերը: Մի տարի է անցել զինծառայությունից, եւ, ինչպես երեւում է, Դավիթն իրեն լավագույն կողմերով է դրսեւորում:

Այդ մասին տեղեկանում ենք շնորհակալական նամակից, որ ստորագրել են զորամասի հրամանատարը եւ անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով տեղակալը. «Հարգելի պարոն Հարությունյան, տիկին Մաթեւոսյան, Ձեր որդի՝ շարքային Դավիթ Հարությունյանն ազնվորեն եւ բարեխղճորեն է կատարում իր զինվորական պարտքը հայրենիքի հանդեպ, ինչի համար զորամասի հրամանատարությունը ձեզ ի սրտե շնորհակալություն է հայտնում: Ծառայության ընթացքում ձեր որդին առնականացավ, հարստացավ հոգեպես, կոփվեց ֆիզիկապես եւ դարձավ մեր հայրենիքի նվիրյալ ու հավատարիմ պաշտպանը: Աշխատասիրության, ազնվության եւ մարտական ծառայության ընթացքում ցուցաբերած սրտացավ վերաբերմունքի համար արժանացավ հրամանատարության եւ ընկերների հարգանքին»:

Նամակն ավարտվում է այն համոզմունքով, որ Դավիթն այսուհետեւ եւս ազնվորեն ու բարեխղճորեն կկատարի իր զինվորական պարտքը, կօգնի հրամանատարությանը զինվորական կարգապահության ամրապնդման գործում:

Այս ամենի համար օրինակական հպարտություն է ապրում զինվորի պապը՝ Արծվանիկում հայտնի Հարությունյանների՝ Շիրինաց գերդաստանի ավագագույն ներկայացուցիչ Հրանտ Հարությունյանը, ում հինգ թոռը՝ Ապավենը, Դավիթը, Վանուշը, Սուրենը, Նարեկը, Հայոց ազգային բանակի համազգեստ են կրում: Ինչպե՞ս չհպարտանալ հայրենիքի պաշտպան թոռներով:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ՏԻՄ ընտրություններ նորակազմ Տաթեւ համայնքում

Հունվարի 14-ին ՀՀ կառավարությունը վաղաժամկետ դադարեցրել է Սյունիքի մարզի Շինուհայր, Տաթեւ, Հալիձոր, Հարժիս, Սվարանց, Խոտ, Տանձատափ, Քաշունի համայնքների ղեկավարների եւ ավագանու անդամների լիազորությունները՝ հիմք ընդունելով ՀՀ ընտրական օրենսգրքի 147-րդ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 22-րդ, 26-րդ եւ 84-րդ հոդվածները:

2016թ. փետրվարի 14-ին նշանակվել է Տաթեւ նորակազմ համայնքի ղեկավարի եւ ավագանու անդամների ընտրություններ՝ ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված տեղական ինքնակառավարման մարմինների արտահերթ ընտրությունների կարգով:

Հիշեցնենք. ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը 2015թ. դեկտեմբերի 15-ին ստորագրել էր ՀՀ օրենքը ««Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին»՝ ընդունված 2015թ. նոյեմբերի 24-ին: Ըստ այդ օրենքի՝ Տաթեւ համայնքի մեջ այսուհետ մտնում են Շինուհայր, Տաթեւ, Հալիձոր, Հարժիս, Սվարանց, Խոտ, Տանձատափ, Քաշունի գյուղերը: Համայնքի կենտրոնը Շինուհայր գյուղն է: Նշված օրենքի հավելվածով հաստատվել է նաեւ Տաթեւ համայնքի վարչական սահմանների նկարագրությունը:

Հ.Գ. Տաթեւ համայնքի ղեկավարի թեկնածու են առաջադրվել ու գրանցվել Իգոր Ռաֆիկի Աբրահամյանը (անկուսակցական, ինքնաառաջադրում), Վարշամ Վլադիկի Բագրատյանը (անկուսակցական, ինքնաառաջադրում), Մուրադ Նահապետի Սիմոնյանը (ՀՀԿ անդամ, առաջադրել է ՀՀԿ-ն): ■

Մարզային փրկարարական վարչությունն ամփոփեց 2015-ը

էջ 1

միջազգային զարգացման եւ համագործակցության գործակալության հետ համատեղ «Տարածքային արագ արձագանքման թիմերի ստեղծում» ծրագրի շրջանակում հաշվետու ժամանակաշրջանում անց է կացվել երկու 36-ժամյա վարժանք, որի արդյունքում թիմը ստացել է ներքին որակավորում:

Անդրադառնալով մարզային փրկարար վարչության կադրերով ապահովվածությանը՝ բանախոսը հայտնեց, որ 2015-ին ծառայության են անցել 10-ը, աշխատանքից ազատվել՝ 20 հոգի: Կադրերով վարչության համալրվածությունը 86 տոկոս է, թափուր տեղերի թիվը 28 է:

Պետական հրդեհային եւ տեխնիկական անվտանգության տեսչության հաշվառման, վերլուծության եւ քարոզչական բաժնի պետ Անդրանիկ Գեւորգյանը ներկաներին իրազեկեց, որ հաշվետու ժամանակաշրջանում մարզում արձանագրվել է հրդեհի 293 դեպք, որը պատճառել է մոտ 91 մլն դրամ նյութական վնաս (նախորդ տարի 233 դեպք էր՝ մոտ 159 մլն դրամի վնասով), նախորդ տարվա համեմատ հրդեհների աճ է գրանցվել 61 դեպքով կամ 21 տոկոսով, բայց նախորդ տարվա համեմատ 62 մլն դրամով նվազել է պատճառված նյութական վնասի չափը:

Արձանագրված հրդեհների աճը պայմանավորված էր չորային բնակլիմայական պայմաններով, հրդեհների 82 տոկոսը տեղի է ունեցել մարզի չոր խոտածածկ տարածքում, 34 դեպք՝ բնակելի տներում եւ տնակներում:

2015-ին գրանցվել են 8 խոշոր եւ առավել խոշոր նյութական վնաս պատճառած հրդեհներ, վնասը մոտ 68 մլն դրամ էր, Մեղրիում «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայի հրկիզվելը 11 մլն դրամ, Քաջարանում «Միցուբիշի պաջերո» ավտոմոբիլի հրո ճարակ դառնալը տիրոջը պատճառեց 5,9 մլն դրամի վնաս, Կապանի Բարաբաթում թաղամասում հրդեհը՝ 5 մլն դրամ: 2015-ին հրդեհից զոհվել է երեք, վնասվածք

ԲԱԳՐԱՏ ՋԱՔԱՐՅԱՆ
Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետ

ստացել վեց անձնավորություն: Ըստ բանախոսի՝ հրդեհների պատճառները եղել են անզգուշությունը, բաց կրակի օգտագործումը, էլեկտրական լարերի կարճ միացումները, երեխաների խաղը կրակի հետ:

Հաշվետվության մեջ նշված էր, որ հետեւողական աշխատանք է տարվում հաշվառումից դուրս մնացած արտադրական վտանգավոր օբյեկտների հայտնաբերման եւ հաշվառման ուղղությամբ: Զեկուցման ավարտից հետո փոխնախարար Արտաշես Բախշյանը նկատեց, որ մարզի 652 օբյեկտից 243-ը գրանցված չէ եւ հետաքրքրվեց, թե ինչ է արվում դրանք հաշվառելու ուղղությամբ:

«Սեյսմիկ պաշտպանության հարավային ծառայություն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Կիմ Բադալյանի փոխանցմամբ՝ 2015-ին մարզի կայանների կողմից գրանցվել է 555 երկրաշարժ, որից 171-ը կենտրոնական Կապան կայանը, Գորիսինը՝ 354-ը: Նաեւ տեղեկացվեց, որ ամենօրյա հսկողություն է սահմանված «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության բաց հանքում կատարվող պայթեցումների ցնցումների գրանցման վրա: Դրանց արդյունքները մշակելուց հետո տեղյակ է պահվում կոմբինատի տնօրենությանը:

Փոխնախարար Արտաշես Բախշյանը հետաքրքրվեց մարզի դպրոցների սեյսմիկ անվտանգության աստիճանով, բանախոսը տեղեկացրեց, որ ՄԱԿ-ի գրասենյակի կողմից ուսումնասիրվել եւ առանձնացվել են առավել սեյսմավտանգ դպրոցները, որոնցից ինը Սյունիքի մարզում է գտնվում:

Սյունիքի մարզի հիդրոմետ ծառայության համակարգող Ժորա Գեւորգյանը ներկայացրեց հունվար ամսվա եղանակային բնութագիրը, ըստ որի՝ Սյունիքում ամսական միջին ջերմաստիճանը հովտային շրջաններում սպասվում է -1- -2, նախալեռնային շրջաններում՝ -2- -3, ինչը խոսում է այն մասին, որ հունվար ամիսը բավականին բարենպաստ է: Ցածր ջերմաստիճան է գրանցվել ամսվա առաջին օրերին. Կապանում հունվարի 4-ին օդի ջերմաստիճանը եղել է -15, օդի կայանում ձյան շերտի բարձրությունը եղել է 35 սմ, իսկ որոշ տեղերում՝ 50-55 սմ, ինչը զգալիորեն գերազանցել է սահմանված նորման, Գորիսում նույն օրը ջերմաստիճանը -10,4 էր, ձյան շերտի բարձրությունը՝ 41 սմ, Սիսիանում՝ ջերմաստիճանը՝ -17,3, ձյան շերտի բարձրությունը՝ 22 սմ: Այս վերջին ցուցանիշը բացատրվեց նրանով, որ գետնաբուք է եղել, ինչը հեռացրել է տարածքի ձյունը: Մեղրիում հունվարի 3-ին գրանցվել է -10,2, ձյան շերտի բարձրությունը՝ 25 սմ, քամու արագությունը եղել է 17մ/վ, ինչն օդերեւութաբանի գնահատմամբ վտանգավոր չի համարվում: Քաջարանում հունվարի 4-ին եղել է -18, ձյան բարձրությունը՝ 57 սմ, տեղումների քանակը 66,8 մմ, նորման՝ 47 մմ է:

Բանախոսը նաեւ հայտնեց, որ նոյեմբերի 24-ին եւ 25-ին Գորիսում եւ Կապանում Հայպետհիդրոմետի մասնագետները կազմակերպեցին սեմինար՝ նվիրված կլիմայի փոփոխությանը, գյուղատնտեսական սպասարկման եւ այլ թեմաների: Միջոցառմանը մասնակցել են գյուղատնտեսության ոլորտի մասնագետներ, նրանց 60 հատ տեղումնաչափ է հատկացվել, որ իրենց մոտ տեղումների մասին Հայհիդրոմետին ինֆորմացիա հաղորդեն: Ժ.Գեւորգյանը հընթացս շնորհակալություն հայտնեց Սիսիան, Գորիս, Քաջարան համայնքների ղեկավարներին, «Խուստուփ» հեռուստաընկերությանը, «Գազպրոմ-Արմենիա» ՓԲ ընկերության Սյունիքի գազամատակարարման եւ գազիֆիկացիայի մասնաճյուղին համագործակցության համար:

Անցած տարում իրենց ղեկավարած կառույցների գործունեությունը ներկայացրին «Տեխնիկական անվտանգության եւ ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի Սյունիքի փորձաքննության բաժնի պետ Կարեն Մկրտչյանը եւ «Հատուկ լեռնափրկարարական ծառայություն» ՓԲԸ Քաջարանի ջոկատի ղեկավար Դավիթ Պետրոսյանը:

Համայնքային իշխանություններին հետ համագործակցելու եւ իրենց պարտականությունները բարեխղճորեն կատարելու համար Մեղրու, Ագարակի, Քաջարանի, Կապանի քաղաքապետեր Արշավիր Հովհաննիսյանը, Մխիթար Զաքարյանը, Վարդան Գեւորգյանը, Աշոտ Հայրապետյանը, Գորիսի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոռ Տիգրանյանը շնորհակալագրեր եւ հուշանվերներ հանձնեցին իրենց համայնքների հրշեջ-փրկարարներին:

Ամփոփելով նիստի արդյունքները՝ Աստվածատուր Պետրոսյանը մասնավորապես այն միտքը հայտնեց, որ ավելի նպատակահարմար կլիներ, որ հաշվետու զեկուցման մեջ առանձին-առանձին վերլուծվեր մարզի տարածաշրջանի հրշեջ-փրկարարների գործունեությունը, ասենք, Կապանի հրշեջ-փրկարարները քանի դեպքի եւ արտակարգ պատահարի են արձագանքել, Սիսիանինը՝ քանիսը, ով ինչքան փրկարարական աշխատանքների է մասնակցել, ինչ խնդիրներ են լուծել եւ այլն:

Սյունիքի մարզպետի տեղակալ Վաչե Գրիգորյանն իր ելույթում կարեւորեց այն հանգամանքը, որ օպերատիվորեն է ստացվել համատեղ աշխատանքը նախարարություն-մարզպետարան-համայնքներ-փրկարար ծառայություն-բնակչություն շղթայում: Օրինակելի ծառայության համար Սյունիքի մարզպետի անունից նա շնորհակալագրեր հանձնեց Սյունիքի փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի համակարգչային օպերատոր Շուշան Դանիելյանին, կենտրոնի պետ, փրկարարական ծառայության փոխգնդապետ Ռոման Սահակյանին, Արտակ Ավանեսյանին:

ՀՀ տարածքային կառավարման եւ արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ. Արտաշես Բախշյանը, ով յուրաքանչյուր ելույթից հետո իր հարցադրումներն էր ուղղում բանախոսին, մատնանշում բացթողումները, առաջարկություններ անում, նիստի ավարտին եւս մի առաջարկություն արեց՝ հիմքեր ստեղծել տարբեր ստորաբաժանումների միջեւ մրցակցության համար, ինչպես դա տեղի է ունենում հանրապետության փրկարարական ծառայությունների միջեւ:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Մարզում նվազել են ծնունդները, իսկ մահացությունները՝ աճել

Արդյունքների ամփոփում

Սյունիքի մարզպետարանում հունվարի 25-ին տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարները հանդես եկան 2015թ. կատարած աշխատանքների հաշվետվությամբ: Ֆինանսական եւ սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հովհաննես Հարությունյանը մասնավորապես նշեց, որ 2015թ. ՀՀ պետական բյուջեից մարզին նախատեսված միջոցների ֆինանսավորումը կազմել է 99,6%, համայնքներին լրավճարների հատկացումը՝ 100%:

«Չնայած հրապարակված բարձր տոկոսներին, բավականին բացթողումներ ունենք: Կան անպարտաճանաչ գյուղապետեր, ովքեր չեն գիտակցում իրենց պարտականությունների կատարման անհրաժեշտությունը», – զեկուցումից հետո ասաց Սյունիքի մարզպետ Ս.Խաչատրյանը՝ կարեւորելով առաջին եռամսյակում համայնքների սեփական եկամուտների 2015 թվականի պարտքերի մարման անհրաժեշտությունը եւ հավելելով՝ *«Որոշ գյուղապետեր չեն ցանկանում իրենց պարտականությունը կատարել՝ չգիտակցելով, որ սեփական եկամուտներ հավաքելով է ձեւավորվում համայնքի բյուջեն, որով կարելի է այդ նույն համայնքում որեւէ փոքրիկ գործ ձեռնարկել»:*

Առողջապահության եւ սոցիալական ապահովության վարչության պետ Նունե Գեւորգյանը զեկուցումը սկսեց թվերի հրապարակումով, բայց ոչ այնքան հուսադրող. նախորդ տարվա համեմատ մարզում ծնունդները նվազել են 68-ով, 1256 մահ է գրանցվել, նախորդ տարում՝ 1223, բնական աճը նվազել է մարզում, ծնունդների թիվը համեմատաբար նվազել են Կապանում եւ Սիսիանում: Բանախոսն անդրադարձավ Քաջարանի հիվանդանոցում անցած տարում մեծ աղմուկ հանած հեպատիտ C-ով վարակված հիվանդների խնդրին՝ ներկայացնելով, որ ախտորոշվել է հեպատիտ C-ով վարակված 16 հիվանդ, ովքեր ամբողջովին ապաքինվել են եւ գտնվում են բժիշկների հսկողության տակ: Մարզպետը հետաքրքրվեց նաեւ մարզում սուր շնչառական հիվանդությունների տարածվածության չափով:

Մարզպետին առավել հետաքրքրում էր կրթական համակարգում տիրող իրավիճակը, եւ երբ կրթության մշակույթի եւ սպորտի վարչության պետ Հովիկ Ալեքսանյանը զեկուցում էր, հաճախ ընդհատում էր բանախոսին, պարզաբանումներ պահանջում այս կամ այն հարցի շուրջ: Պարզ դարձավ, որ մարզի բոլոր դպրոցներն ապահովված են ինտերնետային կապով, 102 դպրոցում գործում է համակարգչային դասարան, մեկ դպրոցին միջինն ընկնում է 11 համակարգիչ: Հաջորդը, որը նկատեց մարզպետը, այն էր, որ գյուղական խոշոր համայնքների դպրոցներից օլիմպիադաներում լուրջ արդյունքներ չեն լինում: *«Եթե տնօրենը վերջին տասը տարում ոչ մի արդյունք ցույց չի տվել, ուրեմն նա ի վիճակի չէ աշխատելու այդ կրթօջախում: Մենք այդ տնօրենին ուզում ենք լավություն անել՝ նրան չտեղաշարժելով, բայց հարյուրավոր աշակերտների վատություն ենք անում»,* – եզրակացրեց մարզպետը:

Խնդիր դրվեց նաեւ գյուղական դպրոցների դեպքում մանկավարժներ ընտրել համայնքից, քանզի առատ ձյան դեպքում փակվում են գյուղ տանող ճանապարհները, ինչը դրսեկ մանկավարժներին դասերից ուշանալու տեղիք է տալիս: *«Եթե ուզում եք հասկանալ, որ պետության հիմքն ու ապագան դպրոցն է, պետք է լուրջ քայլեր անել: Եթե չեք ուզում գիտակցել, սա արդեն այլ խնդիր է»,* - եզրակացրեց մարզպետը:

Գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության պետ Սամվել Թանգյանը նշեց, որ չնայած 2015-ի աննախադեպ երաշտին, մարզի բուսաբուծության եւ անասնապահության ոլորտում գրանցվել է առաջընթաց նախորդ տարվա համեմատ՝ կարտոֆիլի, բանջարեղենի, պտղի, մսի, կաթի, ձվի արտադրության գծով: Երաշտի պատճառով տուժել է հացահատիկի արտադրությունը, մեկ հեկտարից միջին բերքատվությունը նախորդ տարվա 30,4-ի փոխարեն եղել է 26,3 ցենտներ: Ինչ վերաբերում է առաջիկա բերքին, նախորդ տարվա համեմատ 440 հեկտարով ավելի աշնանացան է կատարվել: Ցրտահերկը նախորդ տարվա համեմատ եւս ավելի է 173 հեկտարով:

Անասնապահության վերաբերյալ թվեր հրապարակելուց հետո մարզպետը հորդորեց ավելի լուրջ ուշադրություն դարձնել այդ ոլորտին՝ իր ասածը հիմնավորելով. *«Եթե զարկ չտվեցիք այդ ոլորտին, գյուղացին քաղցած է մնալու, միշտ ասում եմ գյուղապետերին՝ 20-25 խոշոր պահել, որ գյուղացին նրանից օրինակ վերցնի: Եվ պետք է գյուղաբնակին ճիշտ խորհուրդներ տալ, որ լրջորեն զբաղվի անասնապահությամբ եւ դաշտավարությամբ»:*

Մարզպետարանի աշխատակազմի մյուս ստորաբաժանումների ղեկավարները եւս տեղեկատվություն ներկայացրին 2015 թվականի իրենց ղեկավարած ոլորտում կատարված աշխատանքների մասին:

Ամփոփելով խորհրդակցության արդյունքները՝ Ս.Խաչատրյանը մարզպետարանի աշխատանքը գնահատեց լավ, բայց նաեւ նշեց, որ տակավին կան բավականին խնդիրներ եւ բացթողումներ, որոնց պիտի լուրջ վերաբերվել: Նաեւ համոզմունք հայտնեց, որ մի շաբաթվա ընթացքում մարզպետարանի վարչություններն ու բաժինները կներկայացնեն 2016թ. անելիքների գրաֆիկը՝ դրանք հաստատելու եւ հետագա աշխատանքները նախանշելու համար:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Հունվարի 28-ը բանակի օրն է

ՏԻԳՐԱՆ ՓԱՐՎԱՆՅԱՆ.
«Թող թնդանոթներն ու մյուս զինատեսակները կրակեն միայն զորավարժարաններում»

Հարցազրույց ՀՀ զինված ուժերի 1-ին բանակային կորպուսի հրամանատար, գնդապետ Տիգրան Փարվանյանի հետ

էջ 1

– Պարոն գնդապետ, հրապարակայնության, թափանցիկության հանդեպ ձեր դրական վերաբերմունքը ողջունելի է: Միշտ չէ եւ բոլոր հրամանատարները չեն, որ նման բաց աշխատանքի կողմնակից են եղել: Կարծում ենք՝ այսուհետ եւս կշարունակենք մեր համագործակցությունը:

– Պատրաստ եմ համագործակցելու լրատվամիջոցների հետ, որովհետեւ բանակը մեր պետության, մեր ժողովրդի ամենաթափանցիկ գերատեսչություններից մեկն է, որ միշտ ժողովրդի հետ է, ծնվել է նրա ծոցից եւ պաշտպանում է նրա անվտանգությունն ու անդորրը:

– Այսօր մեր ընթերցողին եւ հասարակությանն ընդհանրապես մտահոգում է, թե ինչպես է օպերատիվ իրավիճակը հայ-ադրբեջանական զորքերի շփման գծում:

– Հայ-ադրբեջանական զորքերի շփման գծում վիճակը բավականին լարված է, որովհետեւ այն, ինչ ասում են Ադրբեջանի ղեկավարությունն ու բանակի հրամանատարությունը, իրականությանը չի համապատասխանում, ոչ մի անգամ իրենց խոսքի տերը չեն եղել, միշտ ստի եւ կեղծիքի վրա են հիմնված նրանց քաղաքականությունն ու գործողությունները, միգուցե այդ ամենն անում են, որ երկրի ներքաղաքական վիճակը լարված պահեն, որ ժողովուրդը չըմբոստանա, չընդվզի… Բայց ինչպես ցույց են տալիս վերջին իրադարձությունները, պատերազմը վերսկսելու հռետորաբանությունն էլ չի օգնում: Քանզի եթե ամեն ինչ հանգիստ լինի շփման գծում, ժողովուրդը կմտածի եւ իր կենցաղի, եւ իր սոցիալական վիճակի մասին: Իսկ այսօր մարդիկ զանգվածաբար դուրս են գալիս փողոցներ, բողոքում են պետական այրերի վարած քաղաքականության դեմ: Այն հաստատ համոզմունքն ունեմ, որ Ադրբեջանի բարձրաստիճան ղեկավարությունը փորձում է շփման գծում լարվածություն ստեղծել, որ մարդկանց ուշադրությունը շեղի սոցիալական հարցերից:

– Անվերապահորեն կարելի է ասել, որ 1-ին բանակային կորպուսը փառապանծ ուղի է անցել, այստեղ են հրամանատարական մկրտություն ստացել հայոց ազգային բանակի երեւելի դեմքերից շատերը, միջանցքում փակցված վահանակին նրանց լուսանկարներն են, ինչը վկայում է, որ գործ ունենք հայոց ազգային բանակի ամենամարտունակ զորամիավորումներից մեկի հետ, որի ավանդույթները ոչ միայն պահպանվում, այլեւ բազմապատկվում են:

– Ինչ վերաբերում է ձեր դիտարկմանը, լիովին համաձայն եմ ասվածին: Բանակն ու հասարակությունը մի ընդհանուր օրգանիզմ են, մեկը մյուսից անկախ ապրել ու գործել չի կարող: Դեռ ավելին՝ քիչ առաջ արդեն նշեցի, որ բանակը ծնվել է ժողովրդի ծոցից, հետեւաբար մեր զորամիավորումը, որ տեղակայված է Հայաստանի ռազմավարական տեսակետից կարեւոր մարզում, եւ ժողովուրդը, որ դարեր ու հազարամյակներ շարունակ միշտ ըմբոստացել է բռնակալների դեմ, միասնական են. այդ ոգին ժողովրդի մեջ միշտ կա, ժողովուրդն է բանակի թիկունքին, բանակն էլ պահապան է այդ ժողովրդին: Սյունեցին հզոր է իր բանակով, իր խելքով, իր մտքով, իր սառնասրտությամբ:

– Մի խնդրի մասին այժմ շատ են խոսում: Եվ նույնիսկ համեմատություններ են անում 1990-ականների հետ: Երբեմն որոշ վատատեսներ բարձրաձայնում են, թե իբր մեր ժամանակի զինվորը չունի բարոյահոգեբանական այն վիճակը, ինչ կար Արցախյան գոյամարտի տարիներին: Հայ զինվորի բարոյահոգեբանական վիճակի, տրամադրության մասին կուզեինք ձեզնից իմանալ:

– Այսօրվա զինվորի բարոյահոգեբանական վիճակն ավելի բարձր է, քան շատ-շատ ժամանակներ առաջ՝ մեր բանակի հիմնադրումից ի վեր: Եթե խոսքը 1990-ականների սկզբի մասին է, այն ժամանակ ոչ բանակ ենք ունեցել, ոչ զինվորական կառույցներ: Մենք ունեցել ենք սահմանը հսկող ջոկատներ՝ որսորդական հրացաններով զինված, որոնց անվանում էինք ֆիդայական ջոկատներ՝ կոչված իրենց հողն ու ջուրը պաշտպանելու: Բոլորս գիտենք, որ մեր բանակը դառնում է 24 տարեկան: 1992 թվականին առաջին անգամ հայ զինակոչիկը զորակոչվեց զինծառայության: Հետեւաբար չէր կարող զինուժն ավելի մարտունակ, ավելի հզոր, ավելի ուժեղ լինել այն ժամանակ: Բայց որ հայի ոգին միշտ եղել է զինվորի մեջ, ոչ թե հիմա, այլ դարեր շարունակ, դա փաստ է, քանզի 1992 թվականին զորակոչված զինվորներն առյուծի պես կռվել են մինչեւ տարածաշրջանում հրադադար հաստատելը, որն այժմ պարբերաբար խախտում է մեր հակառակորդը: Եվ 1992 թվականից հետո մինչ հիմա ժամ առ ժամ, օրեցօր շարունակում է զարգանալ եւ հզորանալ: Եվ այսօր մարտունակությամբ շատ երկրների բանակներին գերազանցում ենք, որովհետեւ մեր զինվորը զբաղվում է մարտական պատրաստականությամբ, դա առաջնայինն է: Եթե զինվորը տեսականորեն եւ գործնականում չկարողանա իր խնդիրը լուծել, նա ինչպե՞ս կարող է կանգնել առաջնագծում, դիրք պահել, սահման հսկել, հայրենիք ու օջախ պահպանել:

Բանակի մասին չարախոսներն էլ երեւի դրսից հովանավորողներ ունեն՝ բանակը մրոտելու, նրա հաջողությունները նսեմացնելու: Նրանց ազգի թշնամիներ եմ համարում: Եթե նրանցից մեկը գա բանակ, ծառայի, առնչվի բանակային կյանքին, գուցե կգիտակցի՝ բանակն ինչ է, ում հետ գործ ունի եւ ինչ կարող է գրել: Ամեն գրիչ չէ, որ ճշմարիտ է ներկայացնում իրականությունը:

– Արդեն մի քանի ամիս է, ինչ 1994-ի մայիսին հաստատված զինադադարի մասին այլեւս չենք խոսում: Փոխարենը խոսում ենք պատերազմական իրավիճակների մասին: Ադրբեջանում օրեցօր աճող պատերազմի հռետորաբանությունն էլ այլեւս մեզ չի զարմացնում: Եթե լայնամասշտաբ գործողություններ ծավալվեն, Աստված մի արասցե, ինչպիսի զարգացումներ կարող են լինել…

– Նախ՝ ինձ չի թվում, որ լայնածավալ գործողություններ կսկսվեն: Մենք այնպիսի իրավիճակում ենք հայտնվել, որ կարելի է բնորոշել ոչ խաղաղություն, ոչ պատերազմ: Երբ սահմանին անընդհատ զինվոր է զոհվում, երբ դիվերսիոն խմբերը պարբերաբար փորձում են ներխուժել մեր դիրքերը, երբ նրանց դիպուկահարները փորձում են խոցել առաջնագծում հերթապահող մեր զինվորներին, ի՞նչ խաղաղության մասին է խոսքը: Խաղաղությունը մենք ենք պահում, քանզի մեր խոսքի տերն ենք: Տարբեր մակարդակի հանդիպումներում հանրապետության նախագահն ու պաշտպանության նախարարը քանիցս կրկնել են, որ կողմնակից ենք խաղաղության: Հարցի լուծումը պիտի լինի խաղաղ ճանապարհով: Իսկ մեր վայհարեւանները կարծում են, որ եթե իրենց նման չենք սպառնում, տեղյակ չենք, չգիտենք: Եթե հակառակորդը մտածում է լայնածավալ գործողությունների մասին, թող սկսի: Համոզված եմ, որ շատ արագորեն զղջալու է, որ նման գործողություններ է սկսել: Արժանի հակահարված կստանա, եւ դեռ մի բան էլ մեզ օգուտ կմնա՝ կշարունակենք մեր պատմական տարածքներն ազատագրել:

– Վերջին մեկ տարում անընդհատ լսում ենք սպառազինության ոլորտում Ադրբեջանի առաջընթացի մասին: Մասնավորապես, նկատի է առնվում Ռուսաստանից զենքի վաճառքը Ադրբեջանին: Մի՞թե իրական է շրջանառվող տեսակետը, որ Ադրբեջանը սպառազինության ոլորտում առավելություն ունի, եւ առհասարակ ինչպե՞ս եք գնահատում իրավիճակն այդ ոլորտում:

– Ինչ վերաբերում է սպառազինությանը, տեսնելով եւ լսելով Ադրբեջանի վարած քաղաքականությունը, գալիս ես եզրակացության, որ բանը ցանկանում են հասցնել սպառազինությունների մրցավազքի: Բայց մեր երկրի ղեկավարությունը, մեր ժողովուրդը նման խնդիր չեն դնում: Ի՞նչ սպառազինության մրցավազքի մասին է խոսքը: Ունենք այն, ինչ ունենք, մեր եղածը մեզ բավական է: Եթե հակառակորդը թե մարդկային ռեսուրսներով, թե զինատեսակներով փոքր-ինչ մեզ գերազանցում է, դա դեռեւս ոչ մի բան չի նշանակում, էլի մեր օգտին է այդ ամենը, մեկ է՝ մեզ է անցնելու այդ ռազմամթերքը: Այդքան քանակը չէ կարեւոր, որքան այդ զենքը յուրացնելը եւ օգտագործելը: Կարող է՝ նրանք քանակապես շատ են, բայց մի կարգին ռազմական օդաչու չունեն: Տարբեր վայրերից հրավիրում են ռազմական մասնագետներ, բայց իրենք իրենցը պիտի ունենան: Այս առումով կարծում եմ՝ հաղթանակը ոչ թե քանակով է պայմանավորված, այլ որակով: Այսօր պաշտպանության նախարարության կողմից խնդիրն այնպես է դրված, որ փոքր ուժերով մեծ խնդիր լուծվի: Միայն այս ուղիով ենք հասնելու մեր վերջնական հաղթանակին: Եվ հաստատ հասնելու ենք: Մեր զինվորի ոգին այնքան բարձր է, որ անհնար է ընկրկի: Արցախյան պատերազմում դրանում համոզվեցինք:

– Գաղտնիք չէ, որ Հայոց ազգային բանակը ձեւավորվեց հիմնականում ազատամարտիկների, ոչ պրոֆեսիոնալների բազայի վրա: Բայց տարիներ են անցել. կարո՞ղ ենք հիմա արձանագրել, որ հատկապես սպայական անձնակազմը համալրված է հիմնականում կամ գրեթե հիմնականում պրոֆեսիոնալներով:

– Ինչ վերաբերում է ազատամարտիկներին, ովքեր ցանկություն ունեցան մնալ բանակում, նրանք լիարժեքորեն կատարելագործվեցին եւ բոլորը դարձան պրոֆեսիոնալ զինվորականներ: Մեր բանակում չկա ոչ պրոֆեսիոնալ զինվորական, ոչ պրոֆեսիոնալ սպա: Չունենք զորամասի հրամանատար, ով պրոֆեսիոնալ չէ: Բոլոր զորամասերի հրամանատարներն ուսանել են ռազմական ակադեմիաներում, ռազմական ինստիտուտներում, նույնը՝ գումարտակի հրամանատարները, նրանց տեղակալները: Իսկ ազատամարտիկներից նրանք, ովքեր չշարունակեցին զինվորական գործը, անցան թիկունք, մասնակցեցին մեր նորանկախ պետության կայացմանը, միասին կայացրին եւ մեր պետությունը, եւ մեր բանակը: Իսկ բանակն աստիճանաբար առնականանում է եւ ամենամարտունակն է՝ գոնե տարածաշրջանում:

– Հարցը փոքր-ինչ նուրբ է. որպես հրամանատար, ի՞նչ կցանկանայիք ասել խաղաղ պայմաններում զոհված զինվորների ծնողներին:

– Ոչ մի խոսքով չես կարող սփոփել զոհված զինվորների ծնողներին, քանզի վերքն այնպես խորն է, ցավն՝ անամոք: Ընդհանրապես որդեկորույս հոր թե մոր հոգիները չեն սփոփվելու: Հայ ժողովուրդը հզոր ժողովուրդ է, ուղղակի այնպիսի կամք պիտի ունենալ, որ ընդունեն՝ իրենք հերոս որդի են դաստիարակել: Մարդ կա 80 կամ 100 տարի ապրում է, բայց երկրային կյանքում ոչ մի հետք չի թողնում: Իսկ 20 տարեկանում անմահանալ՝ դա ինքնին հերոսություն է: Նման հերոսների արյան գնով է հզորանում բանակը, եւ երկրի խաղաղությունն է պահպանվում, եւ մեր արժեքային համակարգն է ամրապնդվում: Ուշագրավ է, որ զինվորը, տեսնելով ընկերոջ մահը, ոչ թե ընկճվում է, այլ ոգեպես ավելի է ամրապնդվում, նրա մեջ ավելի է բարձրանում հոգու հզորությունը, հավատն իրեն վստահված տարածքը պահպանելու հանդեպ:

– Պարոն գնդապետ, մենք՝ խորհրդային բանակում ծառայածներս, ականատես ենք եղել զինվորների միջեւ ոչ կանոնադրական հարաբերությունների մի դրսեւորման՝ «դեդովշչինա», երբ առավել հին ծառայողները ճնշում, երբեմն ծաղրուծանակի են ենթարկում նորակոչիկներին: Իսկ մեր բանակում նկատվո՞ւմ են ոչ կանոնադրական դրսեւորման դեպքեր:

– «Դեդովշչինա» բառն ինձ համար դարձել է խորթ, հեռավոր մի հուշ, քանի որ ինքս էլ խորհրդային բանակում եմ ծառայել: Իսկ ընդհանրապես 31-րդ տարին է, ինչ ուսադիրներ եմ կրում: Այդ «դեդովշչինային» ես էլ ականատես եմ եղել եւ եկել-հասել եմ մինչեւ այս օրերը: Բայց երեւի 5-6 տարի չէի լսել այդ բառը: Մի օրինաչափություն կա մեր բանակում. ծառայողների 99 տոկոսը հայ է: Մեկուկես տարվա ծառայողը եւ օրերս զորակոչված զինվորը երկուսն էլ հայ են: Ինչպե՞ս կարող է մեկը մյուսին նեղացնի. բանակային միջավայրում դա չի ընդունվի: Պատահում են նվազ դաստիարակությամբ, ցածր կրթական մակարդակով զինվորներ: Հնարավոր է մեկը խախտի զինվորական կանոնադրությունը, փորձի «եղանակ» ստեղծել: Նման դեպքերն արագ կանխվում են: Ի վերջո բանակն էլ ունի իրավապահ մարմիններ՝ ռազմական ոստիկանություն, զինվորական դատախազություն, քննչական կոմիտե եւ այլն, որոնք միտված են նման դեպքերը կանխելուն: Եթե ոմանք էլ չեն գիտակցում, որ իրենք քրեորեն պատժելի արարք են թույլ տվել, ստանում են իրենց արժանի պատիժը, ինչը մեր բանակային կորպուսում շատ քիչ տոկոս է կազմում: Դիմելով զինվորներին՝ հաճախ եմ կրկնում. դուք ձեր հոր եւ մոր դեմքն եք, ձեր ընտանիքի հայելին, այնպես արեք, որ ձեր ընտանիքի մասին վատ կարծիք չկազմեն: Այս խոսքերը, ըստ իս, ավելի դաստիարակչական նշանակություն են ունենում, քան ձայնը բարձրացնելը, պատժելը եւ այլն: «Դեդովշչինա» եզրույթն

ՍՅԵԹԱՐՍ

Ծնվել է 1967թ. սեպտեմբերի 21-ին Ապարան քաղաքում: 1974-75 ուստարում ընդունվել եւ 1984-85 ուստարում ավարտել է Ապարանի թիվ 1 միջնակարգ դպրոցը: Այնուհետեւ ընդունվել է Օրջոնիկիձեի բարձրագույն համազորային հրամանատարական ուսումնարանը: 1983 թվականին ուսումնարանն ավարտելով՝ նշանակվել է Հունգարիայում տեղակայված Հարավային զորքերի խմբավորման 19-րդ տանկային դիվիզիայի մոտոհրաձգային գնդի դասակի հրամանատար:
Այնուհետեւ զինծառայության է անցել Ուկրաինայում: 1991-ի վերջին տեղափոխվել է Հայաստան՝ ընդգրկվել ինքնապաշտպանական ջոկատների կազմում: Երբ ստեղծվեցին ՀՀ զինված ուժերը, անդամագրվել է նորաստեղծ հայոց ազգային բանակին, վարել տարբեր պաշտոններ, ծառայել բանակային տարբեր կորպուսներում: 1995 թվականին ուսումնական բրիգադի գումարտակի հրամանատար էր, այնուհետեւ եղել է բրիգադի հրամանատարի պաշտոնակատար: 1998 թվականին գործուղվել է ուսանելու Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիայում, որն ավարտել է գերազանցությամբ: 2001 թվականից ծառայել է մեր զինված ուժերի տարբեր ստորաբաժանումներում, վարելով բարձր պաշտոններ: 2013թ. գարնանը նշանակվել է առաջին բանակային կորպուսի հրամանատար:
Ամուսնացած է, ունի երկու որդի:
Գորիս քաղաքի պատվավոր քաղաքացի է:

Պարգեւները՝

«Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի մեդալ, «Մարտական ծառայության» մեդալ-ՀՀ, «Մարտական ծառայության» մեդալ-ԼՂՀ, «Անդրանիկ Օզանյան» մեդալ, «Դրաստամատ Կանայան» մեդալ, «Նելսոն Ստեփանյան» մեդալ, «Անբասիր ծառայության համար» 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ աստիճանի մեդալ, «ՀՀ ԶՈՒ 20 տարի» հոբելյանական մեդալ եւ այլն, անվանական զենք, տասնյակ պատվոգրեր:

անչափ խորթ է ինձ համար, եւ հաստատ նման բան մեր կորպուսում չկա:

– Տեղային գործո՞նն էլ այլեւս դեր չի կարող խաղալ միջանձնային հարաբերություններում:

– Տեղային գործոնն էլ չի կարող գործել: Գորիսեցին չի կարող Գորիսում ծառայել, եւ դա շատ ճիշտ է: Բոլորս գիտենք, որ զինակոչիկների ծառայության վայրը որոշվում է վիճակահանությամբ: Այս գործում կոռուպցիոն ռիսկերը հասցվել են նվազագույնի, հասել ենք մաքսիմալ արդարության, որ բոլոր բացասական երեւույթները դուրս մղենք բանակից: Ինչ վերաբերում է զինվորների միջանձնային հարաբերություններին... Երեք-չորս օրվա ծառայող զինվորը կարող է այնպիսի խախտում անել, ինչը իրեն թույլ չի տա երկու տարվա ծառայողը: Սա ասում եմ վերը նշած «դեդովշչինա» հերքելու համար: Իսկ թե ով ինչքան է ծառայել, ինչպես է ծառայել, որեւէ նշանակություն չունի: Եթե հարցազրույցի միջոցով նա կվերադաստիարակվի, կզղջա թույլ տված արարքի համար, հնարավոր է ներվի:

– Ընթացքի մեջ է ծմեռային զորակոչը, հունվարը սերնդափոխության ամիս է, թարմացվում է նաեւ առաջին բանակային կորպուսի կազմը: Տվյալ դեպքում մեզ հետաքրքրում է՝ ֆիզիկական ի՞նչ պատրաստականությամբ են նորակոչիկները ներկայանում զինծառայության:

– Տարեցտարի բարելավվում է զինակոչիկների ֆիզպատրաստականությունը: Այս զորակոչին բանակ են կանչվում 1997-1998 թվականներին ծնվածները: Բոլորս քաջատեղյակ ենք, թե Հայաստանն ինչպիսի ցնցումներ ապրեց. երկրաշարժ, Խորհրդային Միության փլուզում, մութ ու ցուրտ տարիներ, պատերազմ: Այդ տարիներին ո՞վ էր մտածում երեխաների ֆիզդաստիարակության մասին: Բայց երկրի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավումը դրականորեն անդրադարձավ զինակոչիկների ֆիզպատրաստության վրա: Արդեն հասցրել եմ լինել մի քանի զորամասերում, զրուցել զինակոչիկների հետ, բոլորն էլ պինդ, առողջ, նորմալ տղաներ են, հաստատ համոզված եմ, որ բոլորն էլ տրամադրված են ծառայության եւ իրենց հանձնարարված առաջադրանքները կատարելուն:

– Վերջերս շատ են դիմում պայմանագրային հիմունքներով ծառայելու: Ըստ ձեզ՝ դա զբաղվածության խնդրո՞վ է պայմանավորված, թե՞ մարդկանց ոգին է բարձրացել:

– Ի սկզբանե պայմանագրով ծառայողներ եղել են, վարորդներ են եղել, տարբեր մասնագետներ: Բայց ընդհանուր մարտական կազմը պայմանագրային ծառայողների, որ մարտական հերթապահության պիտի մասնակցեր, քիչ հետո ձեւավորվեց: Սկզբում տարիքային ցենզը բարձր էր, ընդհուպ մինչեւ 40 տարեկան: Զգացվում էր, որ պայմանագրայինների նպատակը սոցիալական խնդիրների լուծումն էր, մարդն աշխատանք չի գտնում, արտագաղթելու հնարավորություն չունի եւ այլն, եւ այլն: Բայց վերջին տարիներին տարիքային ցենզը զգալիորեն իջել է, վիճակագրությունը ցույց է տալիս, որ պայմանագրայինների մի մասն ընդամենը վեց ամիս առաջ է զորացրվել զինված ուժերից եւ դիմում է պայմանագրային հիմունքներով ծառայելու: Այնպիսի մի սահմանագծի ենք հասել, որ ոչ բոլոր դիմումներին է դրական լուծում տրվում, որովհետեւ հաստիքացուցակով թափուր տեղ չկա: Եթե նախկինում դիմող եւ ծառայության անցնողները տարբեր դաստիարակություն ունեին, մեկը կարգը խախտում էր՝ ազատում էինք, հիմա յուրաքանչյուրն «ատամներով» իր տեղը պահում է, եւ նրանց կարգապահությունը ոչնչով չի տարբերվում պարտադիր զինծառայության անցնողներից: Տարիքային ցենզը զգալիորեն իջել է, եւ դա ընդհանրապես ուրախացնող է: Դա խոսում է այն մասին, որ մարդն իր կենսագրությունն արդեն կապում է բանակի հետ: Այունիքի մարզում այդ միտումը կա, ես դա տեսնում եմ, քանզի յոթերորդ տարին է, ինչ տարածաշրջանում եմ ծառայում: Եվ ժողովրդի բնավորությունը, եւ գրագիտության աստիճանը գիտեմ, եւ ժողովրդի բարքերը:

– Մենք նաեւ մի դիտարկում ունենք: Այն քչերից մեկն եք, որ շատ եք հասարակության հետ շփվում: Ձեզ կարելի է տեսնել ամենուր, մարզի տարածաշրջաններում, մարզում չի լինում մի նշանակալի միջոցառում, որ 1-ին բանակային կորպուսի հրամանատարը ներկա չլինի: Դա հետաքրքիր գիծ է ձեր կերպարին: Դուք էությա՞մբ եք այդպիսին, թե՞ անում եք բանակ-հասարակություն կապն ավելի սերտացնելու համար:

– Նախ՝ եթե մարդու արյան մեջ չլինի, դա ինքնաբուխ չի ստացվի, երկրորդ՝ ինչո՞ւ եմ կարեւորում բանակ-հասարակություն կապը: Ինչքան ժողովուրդը մոտ լինի բանակին, ժողովուրդն ինչքան մոտ լինի որդուն, երկուստեք շահավետ կլինի, ինչո՞ւ, որովհետեւ զինվորը լոկ զինվոր չէ, նա ռոբոտ չէ, նա պիտի շփվի քաղաքացիական անձանց հետ, հասարակության հետ, որ զինվորը զգա, որ կյանքը սահմանափակված չէ սոսկ զորավարժություններով, զինվորական կացարանով, առաջնագծով: Եթե վաղը մեր զինվորը կանգնի առաջնագծում, Աստված մի արասցե, պատերազմ լինի եւ զգա, որ Այունիքի ժողովուրդը տեղահանվել է, տնից-տեղից գնացել է, իր հողը մեր զինվորն իր ատամներով կպահի, բայց, հնարավոր է, ոգին կոտրվի: Իսկ եթե զգա, որ իր մեջքին կանգնած է մի ամբողջ ժողովուրդ, նրա մեջ ոչ միայն մարտական ոգին, այլեւ պատասխանատվությունը մի քանի անգամ կբարձրանա, քանզի այն գիտակցումը կունենա, որ իր հետեւում կա ժողովուրդ՝ կին, երեխա, ծերունի, մայր, քույր, եղբայր. ինչպե՞ս ես թողնեմ դիրքերս, չէ՞ որ թշնամին հասնելու է այդտեղ: Այդ պատճառով ժողովուրդն ու բանակը բոլոր ժամանակներում միասին պիտի լինեն: Առանց մեկը մյուսի գոյատեւելը չափազանց դժվար է լինելու:

– Հունվարի 28-ին մեր բանակը դառնում է 24 տարեկան: Ձեր մաղթանքը բանակի օրվա առթիվ:

– Այո, մեր բանակը դարձավ 24 տարեկան: Դա տղամարդու համար այն տարիքն է, որ կարող է երկնքից աստղեր իջեցնել: 24 տարեկանում անձն իրեն զգում է որպես լիարժեք տղամարդ: Հիմա մեր բանակն այդ տղամարդկային տարիքում է: Ուզում եմ շնորհավորել 1-ին բանակային կորպուսի ողջ անձնակազմին, Այունյաց ժողովրդին, քանզի Այունիքի յուրաքանչյուր բնակիչ զինվոր է, որովհետեւ իր մաշկի վրա զգացել, իր տան-դռանը տեսել է պատերազմը, կորուստներ ունեցել, նաեւ վայելել հաղթանակի բերկրանքը: Նաեւ ինձ իրավունք եմ վերապահում շնորհավորել Հայոց ազգային բանակին, մեր ժողովրդին, հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանին՝ ՀՀ զինված ուժերի գերագույն հրամանատարին, ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանին, թող յուրաքանչյուր զինվորի գլխավերեւում լինի կապույտ երկինք, խաղաղություն հայ ժողովրդին մայր հայրենիքում եւ ի սփյուռս համայն աշխարհի: Թող թնդանոթներն ու մյուս զինատեսակները կրակեն միայն զորավարժարաններում:

Զրույցը՝ ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ
18 հունվարի 2016թ.

«Եվս մի քիչ, եւ ամեն ինչ լավ է լինելու»

էջ 1

գաղութը: Նախ, համառոտ տեղեկանք հայկական այս գաղութի, մասնավորապես Բաքվի համայնքի առաջացման մասին:

Այն անխզելիորեն կապված է եղել նավթարդյունաբերության զարգացման հետ:

19-րդ դարի վերջերին դա արտագաղթ համարել չէր կարելի, որովհետեւ նավթարդյունաբերությունը հիմնականում գտնվում էր հայերի ձեռքին, եւ քաղաքի բնակչության ճնշող մեծամասնությունն էլ հայեր էին: Մեր հայրենակիցների շարժը դեպի այդ քաղաք ավելի շուտ եւ ավելի շատ նման էր արտագնա աշխատանքի մեկնման: Բաքվի հայկական համայնքի շարքերը պարբերաբար լրացվել են Արցախից եւ Զանգեզուրից: Այդ պրոցեսը շարունակվում էր մինչեւ անցած դարի 70-ական թվականները: Առիթից օգտվելով ընթերցողներիս տեղյակ պահեմ, որ մասնավորապես մեր երկրամասից Բաքու մեկնածներն ամուր էին պահում կապը հայրենի եզերքի հետ՝ համայնքի ներսում իրենց փոքր համայնքներն ըստ գյուղերի ստեղծելով: Այսպես՝ 1965 թվականին Բաքվում 180 ընտանիք կար Խանածախից, 300 ընտանիք՝ Շինուհայրից (Ժ.Մանուցյան, «Շինուհայրի պատմությունը», 2004թ.), 260 ընտանիք՝ Խնձորեսկից (Ա.Ծատրյան, Խնձորեսկի պատմությունը, անտիպ): Մի խոսքով, այսօրվա Այունիքի տարածաշրջանում չկա մի բնակավայր, որտեղից այդ քաղաքում գաղթօջախ չլիներ, նույնիսկ Տանձատափ փոքր գյուղից 22 ընտանիք կար: Համեմատության համար ասենք, որ այսօրվա Մեղրու տարածաշրջանի գյուղական ամենամեծ համայնքը Լեհվազն է, որն ունի 627 բնակիչ, իսկ Կապանինը՝ Այունիքը, որն ունի 961 բնակիչ: Այո, երեկվա գյուղացիները երբեք չկտրվեցին իրենց հայրենիքի հասարակական, տնտեսական կյանքից: Երեք գյուղի բաքվեբնակներից շինուհայրցիներն ու խանածախցիները նախաձեռնեցին Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հիշատակին հուշարձանների կառուցումը գյուղերում, իսկ նախկին խանածախցիները դեռ մինչեւ Հայրենական մեծ պատերազմը բաղնիք կառուցելու համար սարքավորումներ ձեռք բերեցին եւ ուղարկեցին գյուղ: Հետագայում էլ խմելու ջրատարի 5 կմ խողովակաշար ձեռք բերեցին գյուղի համար: Նմանատիպ ամուր կապերով իրենց փոքր հայրենիքի հետ կապված էին բոլոր նախկին զանգեզուրցիները: Ցավով եմ արձանագրում, որ ներգաղթածների չնչին մասն ի վերջո հանգրվանեց Զանգեզուրում, բայց հետագայում նրանց մեծ մասն էլ գնաց: Գնացին, էլ հետ չեն դառնալու: Հիշո՞ւմ եք, 90-ական թվականներին նրանք գալիս էին ավտոբուսներով, գնացքներով, նույնիսկ ոտքով: Նրանց դիմավորում էինք եղբայրական ջերմությամբ: Հայրենիքը նրանց տրամադրում էր հնարավոր ամեն ինչ: Հյուրանոցների մեծ մասը, հանգստյան տները, առողջարանները լեփ-լեցուն էին: Հազարավորներն էլ տեղավորվել էին հարազատների մոտ: Հետո հայրենիքի, հայրենակիցների կարոտակեզ սերը սկսեց մարել, ուշադրությունը կամաց-կամաց խամրել, փոխվել անտարբերության, մեր խոսակցական լեզվում, նաեւ պաշտոնական փաստաթղթերում սկսեց արմատավորվել «փախստական» տերմինը:

20-րդ դարի սկզբների փախստականներին էլ էինք նմանատիպ մի տերմինով կնքել՝ գաղթական, իսկ ավելի ուշ հայրենադարձվածներին մինչեւ այսօր էլ «ախպար» ենք անվանում: Նշված բոլոր տերմինների մեջ էլ վիրավորական ինչ-որ բան կա: Թե՞ սխալվում եմ: Հիմա այդ «փախստական» անունը, գումարած հայրենիքի օր-օրի աճող անտարբերությունը կանաչ լույս դարձան Ադրբեջանից ներգաղթածների համար, ովքեր տեղները չտաքացրած ձեռքներն առան թափառականի ցուպը: Պատկերն ամբողջական դարձնելու համար սրան էլ ավելացնենք այն, որ արեւմուտքում մշտական բնակություն հաստատելու համար մեկնարկի կանգնած, այստեղ ծնված ու մեծացած մեր հայրենակիցներից շատերը, ինչպես ընդունված է ասել, «փախստական» տերմինն «իրենցով արեցին»:

Մեր քաղաքական, հասարակական գործիչներից շատերը հայտարարում են՝ Արցախի անկախացումը «դե ֆակտո» է: Դժվար թե խելահաս մեկը գտնվի մեր շարքերում, որ կասկածի տակ առնի այս պնդումը:

Բայց «դե ֆակտո է» նաեւ այն, որ Ադրբեջանի հայկական գաղութը ցրվեց, աշխարհով մեկ եղավ, այսինքն՝ սփռվեց: Սփյուռք էր, նորից սփյուռք դարձավ: Ցրվեց, տարանջատվեց ոչ միայն համայնքը, հանգամանքների բերումով, իրենց կամքից անկախ մասնատվեցին, երբեմն նաեւ քայքայվեցին հազարավոր ընտանիքներ՝ մեկ այս, մեկ այն երկրում թողնելով իրենց հարազատների շիրիմները: Հազարներին են հասնում այն ընտանիքները, որոնց անդամներից յուրաքանչյուրը մեկ ուրիշ երկրում է ապրում: Դժվար է հավատալ, որ նրանք երբեւէ նորից իրար գլխի կհավաքվեն, առավել դժվար է հավատալ, որ դա կլինի մայր հայրենիքում:

* * *

Ցանկացած երկրի ապագան կախված է այդ երկրի այսօրվա դպրոցից: Ինչպիսին է այն, այդպիսին էլ լինելու է վաղվա մեր երկիրը: Դպրոցին շատ թե քիչ ծանոթ որեւէ մեկը չի կարող այս մասին առանց մտահոգության մտածել: Ներկան տեսնում ենք: Այս ակնոցներով ապագան էլ այնքան պայծառ չի երեւում: Ցանկանում եմ կանխել այլ կերպ ներկայացնողներին: Ես ամենեւին էլ չեմ խտացնում գույները: Որպես միջնակարգ դպրոցի կայացած լինելու նշան այս կարեւորագույն բնագավառը ղեկավարող չինովնիկներն աշխարհով մեկ փողհարում են միջազգային մրցույթներում մեր երեխաների շահած մրցանակները: Այո, մրցանակներ, մեդալներ կան, բայց դրանք, մի անգամ էլ եմ ասել, բոլորովին էլ մերօրյա դպրոցի շնորհիվ չէ, այլ մի քանի տասնյակ՝ իրենց գործին անմնացորդ նվիրված ուսուցիչ-մանկավարժների, տաղանդավոր երեխաների ու նրանց հետեւողական ծնողների:

Սեփական երեխաների համար մեկ-երկու էլիտար դպրոց բացելով պրոբլեմը չես լուծի: (Բա մեղք չե՞ն նրանք: Եվ հետո, բա մի 15-20 տարի հետո ո՞վ պետք է ղեկավարի Հայաստանը, մեր երեխաներին: Հետո էլ ասում ենք, թե մեր ղեկավարները հեռատես չեն): Իսկ որ այդ դպրոցները բացվում են հատուկ մարդկանց առանձնահատուկ երեխաների համար, փաստ է: Ասացեք խնդրեմ, որ ուսուցիչը, բժիշկը կամ շարքային ինժեները կարող է ամսական 150 հազար դրամ աշխատավարձով (դա էլ լավագույն դեպքում) իր երեխայի ուսումը Դիլիջանի 2,5 «միլիոնական» (Հ. Մաթեւոսյան) հայտնի դպրոցում կազմակերպել: Իսկ իրական դպրոցը շատ է տարբերվում ինչպես հիշյալ, այնպես էլ ՁԼՄ-ում այս բնագավառը ղեկավարող բարձրաստիճան չինովնիկների ելույթներում ներկայացվող դպրոցներից: Ասածներիս ճշմարտացիության մեջ կասկածողներին խնդրում եմ բացել համացանցի info.edu.am էջը: Այստեղ շատ հետաքրքիր տվյալներ կան: Մասնավորապես իմանում ենք, որ հանրապետությունում կա 1457 դպրոց, որից 80-ը՝ ավագ: 41757 ուսուցչից 0,25-0,5 դրույքաչափով զբաղվածները 4825 հոգի են, որից 527-ը՝ Այունիքում, մեկ դրույքից պակաս զբաղվածություն ունի 8771 հոգի, որից 456-ը՝ Այունիքում: 100 աշակերտից պակաս աշակերտ ունեցող դպրոցների թիվը 419 է, որից 77-ը՝ Այունիքում: Ասում ենք՝ 100-ից պակաս աշակերտ ունեցող դպրոց: Գորիսի տարածաշրջանի Բարձրավանի, Տանձատափի, Սվարանցի, Արավուսի, Որոտանի 5 դպրոցում միասին վերցրած սովորում է 89 աշակերտ: Պարզ չէ՞, որ նմանատիպ դպրոցներում նորմալ դասապրոցես իրականացնելն ուղղակի անհնար է: Մյուս կողմից էլ թերբեռնվածության պատճառով բարձր որակավորում ունեցող ուսուցիչները գյուղական դպրոցներ չեն մեկնում: Նախարարության կողմից խստիվ արգելված է համատեղությունը: Դա նշանակում է, որ ֆիզիկայի ուսուցիչն իր դասաժամերից բացի այլ դասաժամ պարապել չի կարող: Սա օրինակ է: Նույնը վերաբերում է նաեւ մյուս առարկաներին: Մեկական դասարանով միջնակարգ դպրոցում ֆիզիկայի դասաժամերը 9 են, քիմիայինը՝ 8,5, աշխարհագրությանը՝ ավելի քիչ: Պատկերն ավելի ամբողջական ու հասկանալի դարձնելու համար ուսուցիչների թափուր տեղի համար տրված մի հայտարարություն եմ վկայակոչում՝

«Հայտարարվում է մրցույթ ՀՀ Այունիքի մարզի «Տանձավերի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հասարակագիտություն (2 ժամ), համաշխարհային պատմություն (1,25 ժամ), հայոց պատմություն (4,75) ժամ ուսուցչի թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման...» (Այունաց երկիր, 3.10.15, թիվ 26): Հետո բերվում է պահանջվող փաստաթղթերի ցուցակը (8 փաստաթուղթ), նկարագրվում մրցույթի կարգը:

Ասացեք խնդրեմ, ով կմեկնի գյուղ 4,5 դասաժամ պատմություն կամ այլ առարկա պարապելու «ըստ դասաբաշխման» վարձատրությամբ: Հասկանալի է, ոչ ոք: Գործող օրենքի համաձայն դիմողներ չլինելու դեպքում դպրոցի տնօրենությունը որոշ միջոցներ կծախսի հայտարարությունը կրկնելու համար: Հասկանալի է նաեւ, որ արդյունքը կլինի նույնը: Նույն սանդը, նույն ջուրը: Ինչքան ուզում ես ծեծիր, բան դուրս չի գա: «Ինչ լավ է, չէ՞»:

Մի առիթով էլ եմ խոսել մերօրյա ուսուցիչների մասնագիտական որակավորման մասին: Նպատակ չունեմ որեւէ մեկին վիրավորել, բայց փաստ է, որ այն ընդհանուր առմամբ հեռու է բավարար լինելուց: Ավելին, առանձին մասնագիտությունների գծով ուղղակի շատ ցածր է: Դրա պատճառը, ըստ իս, ուսուցչի կարեւորագույն առաքելության նկատմամբ պետական մարմինների քամահրական վերաբերմունքն է: Խորհրդային տարիների հետ համեմատած մանկավարժական բուհերի թիվը, որ այժմ համալսարան բարձրագոչ անունն են կրում, ութ անգամ մեծացել է: Այսօր այդպիսիք 16-ն են (տես edu.am ... էջը): Քանակը պետք է որակ բերեր, բայց այս դեպքում

էջ 7

Մանկապարտեզը՝ երեխաների դաստիարակության կարեւորագույն օջախ

Երեխաների կրթության եւ դաստիարակության կարեւորագույն օջախներից մանկապարտեզներին է վերապահված առաջնային օղակ լինելը, որի աշխատանքի պտուղներն էլ հետագայում քաղում են դպրոցում: Պարբերաբար անդրադառնալով հանրակրթական դպրոցներին՝ խոսել ենք այսօրվա սերնդի՝ կրթության հանդեպ ունեցած անտարբերության մասին, բայց երբեւիցե այդ երեւույթը չենք կապել նախադպրոցական ուսումնական հաստատությունների (մանկապարտեզ) գործունեության հետ:

Կապանի թիվ 13 նախադպրոցական ուսումնական հաստատությունը (Ձորք թաղամասում), որ խորհրդային տարիներին 14 խումբ ուներ, 1986 թվականից է զբաղվում մանուկների դաստիարակությամբ՝ մեծ կյանք ուղղորդելու կարեւորագույն առաքելությամբ: Ներկայումս գործում է հինգ խումբ, որոշ խմբերում ընդգրկվել է 30-33 երեխա: *«Օրենքի համաձայն՝ խմբերի երեխաների թվաքանակը որոշվում է տարիքային առանձնահատկությունից ելնելով: Օրինակ՝ 3-5 տարեկան խմբում պիտի մինչեւ 25-30 երեխա լինի, բայց ծնողների խնդրանքը հաշվի առնելով, ընդունում ենք հավելյալ թվով երեխաների՝ երբեմն այդ թիվը հասցնելով 33-ի: Ծայրամասային այս թաղամասում այնպես չէ, որ մանկապարտեզ հաճախել ցանկացող երեխաներն այնքան շատ են, որ ամիսներ առաջ պիտի հերթագրվեն: Հիմնականում մեր մանկապարտեզում նման հարց չի առաջանում, թեկուզ սաների՝ տարեցտարի ավելացող թիվը հնարավոր է հետագայում խմբասենյակ ավելացնելու կարիք առաջացնի»,* – տեղեկացրեց տնօրեն Անահիտ Ստեփանյանը:

2013թ. մարտից է մանկապարտեզի տնօրեն նշանակվել Անահիտ Ստեփանյանը: Նախկինում մանկավարժական գործունեությամբ է զբաղվել, բայց իր իսկ խոստովանությամբ փոքրիկների աշխարհը մի զարմանահրաշ աշխարհ է, որ բազում դժվարություններով հանդերձ, *երաշխավորված է»,* – հպարտությամբ նշում է տնօրենը:

Անահիտ Ստեփանյանի տեղեկացմամբ՝ մանկապարտեզի ղեկավարությունը ստանձնելիս առաջին խնդիրը խոհանոցի վերանորոգումն էր, որ գտնվում էր ծայրահեղ վիճակում: Հիշում է՝ նույնիսկ մի անգամ հյուրեր ուներ, ովքեր, տեսնելով խոհանոցը, ասացին, որ այն անհապաղ պիտի փակվի, քանի որ այդտեղից հնարավոր չէ նորմալ սնունդ մատակարարել երեխաներին: Դիմեցին մարզպետարանի եւ քաղաքապետարանի համապատասխան բաժիններ, եւ սկսվեց խոհանոցի վերանորոգումը: Ներկայումս ունեն բավականին հարմարավետ խոհանոց, որտեղից երեխաներին մատակարարվում է երեքանգամյա սնունդ: Ի դեպ, սննդի մասին խոսեցինք նաեւ որոշ ծնողների հետ, ովքեր նշեցին, որ բավականին հագեցած սննդակարգ է մատուցվում: *«Եթե նախկինում երեխաներին հարցնում էին՝ ի՞նչ եք կերել այսօր, հիմա հարցնում են՝ ի՞նչ եք սովորել, քանի որ նորմալ եւ հագեցած սնունդը նաեւ գերագույն հաճույք է պատճառում: «Զգացումը, որ հատկապես փոքրիկների համար ես գեղեցիկ միջավայր ստեղծում, անփոխարինելի է»,* – նշում է տնօրենը:

Մանկապարտեզի նախկին տնօրեն Աննա Թամրազյանի օրոք վերանորոգվել էին դահլիճը (Վորլդ վիժն-ի կողմից) եւ մեկ խմբասենյակ (քաղաքապետարանի կողմից): Մանկապարտեզի ամբողջ տարածքը, որ բավականին մեծ է, հնարավոր չէ ամբողջովին վերանորոգել: Ժամանակին շինությունը կառուցվել է տիպային նոր նախագծով, խմբային բազմապիսի հարմարություններով: Ներկայումս համալիրում են տեղակայված Կապանի թիվ 3 երաժշտական դպրոցը եւ «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության Կապանի ցերեկային կենտրոնը: Շրջելով խմբասենյակներով, խոհանոցով, պատշգամբով՝ ականատես եղանք մաքուր, գեղեցիկ ու լուսավոր կահավորմամբ միջավայրի, որտեղ, ճիշտ է, մասնակի վերանորոգման, ինչպես նաեւ դիդակտիկ պարագաներով, խաղալիքներով պարբերաբար թարմացվելու կարիք կա, հրատապ լուծում պահանջող խնդիրներ գրեթե չկան: Տնօրենը որպես ոչ առաջնային խնդիր նշեց նաեւ, որ ցանկալի կլիներ՝ վերականգնվեր խորհրդային տարիներին մանկապարտեզում գործող լողավազանը:

«Ես լավատես եմ եւ կարծում եմ, որ կգա ժամանակ, որ այդ փոքրիկ հարցերն այլեւս մանկապարտեզը չի ունենա: Մեզ կմնա միայն պարբերաբար կատարելագործել մասնագիտական գիտելիքները եւ ստեղծագործական աշխատանքը զարգացնել», – նշեց տնօրենը:

Ներկայումս մանկապարտեզ է հաճախում 148 երեխա, որից 2016-17 ուստարում դպրոց կհաճախի մոտ 45 երեխա: *«Մանկապարտեզ հիմնականում ընդունում ենք երկու տարեկանից սկսած, բայց ներկայումս ունենք ավելի փոքր տարիքի երեք երեխա, բացառության կարգով ենք ընդունել: Իսկ ընդհանրապես եթե առանձին մսուրային խումբ չկա, նպատակահարմար չէ այդ տարիքի շատ երեխաներ ընդունելը, քանի որ դաստիարակն ու դայակը տվյալ երեխայի վրա են առավել կենտրոնանում, մյուսները, կարծեք, դուրս են մնում ուշադրությունից»,* – նշեց տնօրենը:

«Մանկապարտեզի առօրյան բավականին հետաքրքիր է սկսվում, կան երեխաներ, ովքեր նույնիսկ վազելով են գալիս մանկապարտեզ. հաճելի երաժշտությունը նրանց բերում է դեպի հարազատ օջախ, որտեղ նրանց հետաքրքիր օր է սպասվում: Քանի որ քաղաքի ծայրամասում ենք գտնվում, եւ շատ ծնողներ հնարավորություն չունեն իրենց երեխաներին տանել քաղաքային միջոցառումներին մասնակցելու, մանկապարտեզում ծնողների մասնակցությամբ կազմակերպվում են տիկնիկային ներկայացումներ, հետաքրքիր ցերեկույթներ, որոնք ինչ-որ չափով լրացնում են այդ բացը», – ոգեւորությամբ է նկարագրում Ա.Ստեփանյանը:

Դաստիարակչուհի Կարինե Նավասարդյանը, ով աշխատել է նաեւ մայրաքաղաքի մանկապարտեզներից մեկում, նշեց, որ այստեղի երեխաների հետ աշխատանքն ավելի արդյունավետ է ստացվում, ծրագրով նախատեսված կետերը լիարժեք կատարում են: Թվում է, թե մայրաքաղաքի երեխաներն ավելի զարգացած եւ ակտիվ պիտի լինեն, բայց Կ.Նավասարդյանը հակառակը պնդեց: *«Այն, ինչ նախատեսված է ծրագրով, տալիս ենք երեխաներին, այլ հարց է, թե որքանով են նրանք յուրացնում: Ամենակարեւորն այն է, որ յուրաքանչյուրին մոտենաս որպես առանձին անհատ: Աշխատանքն ավելի արդյունավետ դարձնելու համար ծնողների հետ համագործակցում ենք՝ կազմակերպելով ծնողավարական սեմինարներ, սպորտլանդիաներ, էքսկուրսիաներ եւ այլն»,* - նշեց դաստիարակչուհին:

> *Մանկապարտեզի բուժքույր Աննա Համբարձումյանը նշեց, որ ամեն առավոտյան ստուգում են երեխաների առողջական վիճակը եւ անհրաժեշտության դեպքում հետ ուղարկում տուն՝ կանխարգելելու համար հնարավոր վարակները: Նա հավելեց նաեւ, որ նախորդ տարիների համեմատ վիրուսային հիվանդությունները լայն տարածում չեն գտնում, երեւի պատճառը ժամանակին պատվաստումներ կատարելն է:*

Կադրերի ընտրության հարցում նույնպես առանձնակի խնդիրներ չեն առաջանում, քանի որ բոլորն էլ կրթությամբ համապատասխանում են իրենց մասնագիտությանը, պարբերաբար վերապատրաստման դասընթացներ անցնում, որ կազմակերպվում է Կրթության ազգային ինստիտուտի, Վորլդ վիժնի, ինչպես նաեւ քաղաքապետարանի համապատասխան մասնագետների կողմից: Ակտիվ համագործակցություն են իրականացնում նաեւ «Կապանի մանկական կենտրոն» ՀՈԱԿ-ի հետ, որի մասնագետները, այցելելով մանկապարտեզ, ծանոթանում են երեխաների խնդիրներին՝ տեղում կամ իրենց կենտրոնում անցկացնելով պարապմունքներ՝ դրանք վերացնելու կամ մեղմացնելու համար: *«Այստեղ բավականին նուրբ մոտեցում է պետք, որովհետեւ ոչ բոլոր ծնողներն են ի վիճակի ընդունելու այն փաստը, որ իրենց երեխան ունի որոշակի բարդություններ, հոգեբանական խնդիրներ, մտավոր եւ լեզվական արատներ: Տեւական ժամանակ եւ երկարատեւ աշխատանք է մեզնից պահանջվել ծնողներին համոզելու, որ եթե երեխան ունի որոշակի խնդիրներ, պետք չէ ամաչել դրանից, այլ պիտի ժամանակին հայտնաբերել եւ կանխարգելել դրանց հետագա զարգացումը: Սկզբնական շրջանում որոշ ծնողներ դժգոհում էին, որ իրենց նորմալ երեխայի հետ մեկ խմբում ինչո՞ւ պիտի որեւէ արատ ունեցող երեխա լինի»,* – նշեց տնօրենը եւ հավելեց, որ փոքրերն ավելի արագ են ընդհանուր լեզու գտնում. ի վերջո չէ՞ որ տվյալ երեխան մեղավոր չէ, որ Աստված նրան այդպիսին է ստեղծել:

Մանկապարտեզում անցկացվող ծնողավարական դասընթացները հնարավորություն են տալիս ծնողներին իրենց հուզող հարցերի եւ թեմաների շուրջ համապատասխան մասնագետների հետ խոսել. հոգեբանին, լոգոպեդին եւ սոցմանկավարժին դիմելու կուլտուրան մեզանում, կարծեք, սկսվում է ձեւավորվել:

Վերջերս մոտակայքում գտնվող երաժշտական դպրոց այցելելն իր դրական արդյունքն է տվել, քանի որ մեր այն հարցին, թե ինչ եք ուզում, որ Ձմեռ պապը ձեզ համար բերի, երեխաներից ոմանք պատասխանեցին՝ տարբեր երաժշտական գործիքներ, ինչը մեր օրերում ողջունելի է: Ավագ խմբի սաներին ճանաչողական նպատակով երբեմն տանում են նաեւ այդ թաղամասում գտնվող թիվ 13 հիմնական դպրոց:

Համագործակցության շրջանակները լայն չեն, բայց արդյունավետ են: Հիմնականում մանկապարտեզին աջակցում են «Դանդի փրիշս մեթալս Կապան» ՓԲԸ-ն, «Վորլդ վիժն Հայաստան» կազմակերպությունը, իսկ քաղաքապետարանը մշտապես ուշադրության կենտրոնում է պահում յուրաքանչյուր հարց եւ արագ լուծում տալիս դրան:

«Մանկավարժի աշխատանքը բավականին պատասխանատու եւ բարդ է, մշտապես առնչվում ես տարբեր մակարդակի, կրթության եւ բնագավառի ծնողների հետ: Հնարավոր է, որ երբեմն տարաձայնություններ առաջանան, բայց դրանք շատ հազվադեպ են լինում: Ամեն դեպքում ես մեր աշխատակիցներին ասում եմ, որ նրանք մանկավարժ են եւ իրավունք չունեն իրենց բարձրությունից իջնել: Իսկ մանկապարտեզում աշխատելու համար պիտի նվիրյալ լինես եւ անսպառ երեւակայություն ունենաս՝ ստեղծագործական աշխատանքը բարձր մակարդակով կատարելու համար», – նշեց Անահիտ Ստեփանյանը եւ խոսքը եզրափակեց Մ.Գորկու խոսքերով. *«Երեխաները վաղվա մեր դատավորներն են, նրանք մեր հայացքների, արարքների քննադատներն են, նրանք այն մարդիկ են, որոնք աշխարհ են մտնում կյանքի նոր ձեւերի կառուցման մեծ աշխատանքի համար»:*

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Քննարկվեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1325 բանաձեւը

Դեկտեմբերի 25-ին «Օրհուս» կենտրոնում տեղի ունեցավ կլոր սեղան «Բարձրացնել կանանց անվտանգությունը եւ մասնակցությունը խաղաղաշինական գործընթացում՝ ստեղծելով արդյունավետ հիմք Հայաստանում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1325 բանաձեւի գործողությունների ազգային ծրագրի ստեղծման համար» ծրագրի շրջանակներում:

«Հասարակությունն առանց բռնության» հկ ծրագրերի ղեկավար Անուշ Խաչատրյանը կլոր սեղանի մասնակիցներին մանրամասն ներկայացրեց ծրագրի նպատակը: Ծրագիրն իրականացվում է «Հարավային Կովկասի հակամարտությունների անվտանգության եւ կայունության 2015-16 հիմնադրամի» շրջանակներում, Մեծ Բրիտանիայի Երեւանյան դեսպանատան ֆինանսական աջակցությամբ: Ծրագիրը կազմակերպության խաղաղաշինական գործունեությանն է ուղղված եւ հիմնական նպատակը ՏԻՄ-երին, լրագրողներին եւ հկ-ներին տեղեկացնել, թե ինչ է 1325 բանաձեւը: *«Չնայած տասը տարուց ավելի է՝ մեր պետությունը վավերացրել է այն, բայց քչերը գիտեն դրա էության մասին: Մինչեւ չմշակվի գործողությունների ազգային ծրագիր, համապատասխան մարմիններն անհրաժեշտ աշխատանքներ չեն կարողանա իրականացնել»,* – նշեց Ա.Խաչատրյանը: Ի դեպ, Գորիսի եւ Կապանի կանանց ռեսուրս կենտրոններն իրականացրել են մոնիտորինգ, թե 2014թ. ՀՀ-ում ինչպես է իրականացվել 1325 բանաձեւը. մոնիտորինգի տվյալները դեռեւս չեն հրապարակվել:

Ըստ ՄԱԿ-ի ԱԽ 1325 բանաձեւի քաղաքացիական հասարակության 2013թ. 1 մշտադիտարկման զեկույցի՝ Հայաստանում հակամարտության ազդեցությունից տուժած կանայք հաճախ դուրս են մնում կրթական, աշխատանքային, առողջապահական համակարգերից, չունեն բանակարանային նորմալ պայմաններ կամ դեռ բնակվում են ժամանակավոր կացարանների անմխիթար պայմաններում: Քանի որ հատկապես մարզերում եւ գյուղական համայնքներում բնակվող տղամարդիկ մեկնում են արտագնա աշխատանքի, կանայք ընտանիքին աջակցելու նպատակով հաճախ ստիպված են լինում համաձայնել ցածր աշխատավարձով, առանց գրանցման եւ ոչ ֆորմալ աշխատանքների, որոնք հանգեցնում են մարդու իրավունքների ոտնահարման: Իրականում այդ բանաձեւը ընդունվել է 2000թ. հոկտեմբերի 30-ին, բայց մեր երկրում դրա մասին չի խոսվել: Համաձայն ՄԱԿ-ի կանոնադրության հոդված 25-ի՝ ՄԱԿ-ի անդամները համաձայնության են գալիս ենթարկվել Անվտանգության խորհրդի որոշումներին ու կատարել դրանք, այսինքն՝ ՄԱԿ-ի ընդունած յուրաքանչյուր որոշում դե ֆակտո եւ դե յուրե վավերացնում է անդամ պետությունը, եւ այն գերակա է տվյալ պետության ներքին օրենսդրության հանդեպ:

1325 բանաձեւն ընդգծում եւ կարեւորում է կանանց դերը հակամարտության կանխարգելման եւ հաղթահարման գործընթացներում, խաղաղ բանակցություններում, խաղաղաշինական եւ խաղաղապահ գործողություններում եւ մարդասիրական աջակցություն տրամադրելու հարցում: Այն խրախուսում է նաեւ հետպատերազմական իրավիճակում խաղաղության եւ անվտանգության պահպանման աշխատանքներում կանանց հավասար մասնակցությունը եւ կոչ անում ՄԱԿ-ին եւ անդամ պետություններին խաղաղությանն ու անվտանգությանն ուղղված իրենց աշխատանքներում ներառել գենդերային զգայուն մոտեցում եւ ավելացնել կանանց մասնակցությունը, իսկ հակամարտող կողմերին՝ պաշտպանել կանանց եւ աղջիկներին գենդերային հիմքով բռնությունից եւ հատկապես բռնաբարությունից ու սեռական բռնության այլ ձեւերից:

2010թ. ՄԱԿ-ի ԱԽ 1325 բանաձեւի ընդունման տասնամյակի կապակցությամբ Անվտանգության խորհրդի պահանջով ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարը ռազմավարություն մշակեց՝ ուղղորդելու բանաձեւի իրականացումը առաջիկա տասը տարվա ընթացքում: Առաջնորդվելով մշակված ռազմավարությամբ՝ ՄԱԿ-ի մարմինները պարտավորվում են քայլեր ձեռնարկել՝ աջակցելու ազգային մակարդակում բանաձեւի իրականացմանը: Բանաձեւի կետերը բաժանված են չորս ճյուղի՝ կանխարգելում (կանանց ու աղջիկների հանդեպ բռնության բոլոր տեսակների կանխարգելում հակամարտության ժամանակ եւ դրանից հետո), մասնակցություն (կանանց հավասար եւ ամբողջական ներգավվածություն եւ մասնակցություն որոշումների կայացման, ընտանեկան, խաղաղաշինական եւ բանակցային գործընթացներին բո-

էջ 8

«Եվս մի քիչ, եւ ամեն ինչ լավ է լինելու»

էջ 5

Ճիշտ հակառակ էֆեկտն է ստացվել: Բանը միայն մանկավարժական համալսարանների նյութատեխնիկական բազայի եւ դասախոսական կազմի որակավորման մեջ չէ (չնայած դա էլ կա), այլ ուսանողական կազմի: Որպես կանոն մանկավարժական բուհեր սովորելու դիմում են ներկայացնում դպրոցները մի կերպ ավարտած շրջանավարտները: Այդպես էլ մի կերպ բուհն են ավարտում եւ գնում դպրոց:

Իսկ ինչու միջնակարգը բարձր առաջադիմությամբ ավարտածները մանկավարժական բուհ չեն դիմում: Նրանք առավելությունը տալիս են տնտեսագիտական կամ իրավաբանական կրթությանը, որովհետեւ ակնհայտ երեւում է, որ նման մասնագիտության կրողները վերեւում հիշատակված պետական հովանավորչության տակ են: Երբեմն փորձում եմ հասկանալ «իրավական երկիր, իրավական պետություն» հասկացությունների իմաստը: Հումորեսկ է թվում, բայց մտածում եմ՝ իրավական երկիր, նշանակում է շատ իրավաբաններ ունեցող երկիր: Դատավորի, դատախազի, այս բնագավառի մյուս պատասխանատու աշխատողների աշխատավարձը հասնում է մի քանի հարյուր հազարի: Նմանատիպ թվերով են հաշվվում նաեւ նրանց կենսաթոշակները: Իմ ծանոթ նախկին դատավորներից մեկը, որի կենսաթոշակը մոտենում է մեկ միլիոն դրամի, կատակում է, թե մտադիր է դիմելու համապատասխան մարմիններին՝ վերահաշվարկելու իր կենսաթոշակը, որովհետեւ իր կարծիքով իրեն պակաս են վճարում: Իմ բարեկամի հումորը հասկանալի է: Բայց այդ ֆոնին հումորի նման է հնչում, որ նվաստս, որ նախկինում ուսուցիչ է եղել, այսօր ստանում է 41 հազար դրամ կենսաթոշակ: Ինձ նման նվաստացած տասնյակ հազարավոր նախկին ուսուցիչներ կան: Կարծում եմ, որ որոշ չափով պարզվեց, թե ինչու լավ սովորող երիտասարդն ապագա մասնագիտություն ընտրելիս առավելությունը տալիս է ոչ մանկավարժական մասնագիտություններին: Եվ այս իրականության պտուղները պետք է ճաշակեն մեր սերունդները:

Ասում են՝ պահանջարկն առաջարկ է ծնում: Ի՞նչ է, իրավաբանների այդքան մեծ պահանջ կա՞ հանրապետությունում, որ նրանց պատրաստման գործում ընդգրկված են մեկ տասնյակից ավելի համալսարաններ: Խորհրդային տարիներին իրավաբանական կրթության միակ օջախը՝ պետական համալսարանը, տարեկան ընդունում էր 25-50 հոգի (այսօր՝ 250 հոգի), բայց չեմ հիշում, որ դատավորի կամ դատախազի որեւէ հաստիք թափուր մնար մասնագետ չլինելու պատճառով: Եթե պահանջարկ-առաջարկ փիլիսոփայությամբ նայենք այս հարցին, պետք է հետեւություն անել, թե մեր երկրում հանցագործություններն են շատացել: Գուցե եւ շատացել են, բայց մի՞թե այդքան…

Այսօր մեր կյանքի, առօրյայի բոլոր հոգսերի, դժվարությունների առկայությունը շատ հեշտ բացատրություն ունի՝ «դեֆակտո» պատերազմական վիճակի մեջ գտնվող երկիր ենք, բա ի՞նչ եք ուզում:

Վեց հարյուր տարուց ավելի պետականությունը կորցրած մեր ժողովուրդը վերստին այն նվաճելուց հետո մայր հայրենիքի մի բուռ հողի վրա ապրում էր մոտ 800 հազար բնակիչ՝ սովի ու հիվանդության ճիրաններում: Հեռու եմ անցյալը գունազարդելու եւ ներկան փնովելու մտքից, քավ լիցի: Բայց եւ կողմնակից չեմ նրան, որ հայտնի թռչունի օրինակով գլուխներս թաղենք ավազի մեջ, իբր ոչինչ չենք տեսնում (այն, ինչ չեմ տեսնում՝ գոյություն չունի փիլիսոփայությամբ): Երկրորդ հանրապետության գոյության առաջին տասը տարիների ընթացքում (1920-1930, անցումային շրջան) կառուցվեցին ջրանցքներ, գործարաններ, հաղթահարվեցին սովն ու հիվանդությունները, եւս տասը տարի, եւ վերացվեց անգրագիտությունը, Հայրենական մեծ պատերազմի նախօրյակին երկրի բնակչությունը հասավ 1,5 մլն-ի:

«Հիշողության սանդուղքով» (այս արտահայտությունն իմը չէ) իջնում եմ անցած դարի 70-ական թվականները: Եթե այսօրվա չափանիշներով մոտենանք ժամանակի այս հատվածին, ապա այն համընկնում է Հայրենական մեծ պատերազմից հետո «անցումային շրջանին»: Դրանք մեր երկրի ծաղկման ու մեր ժողովրդի աստվածատուր տաղանդի բացահայտման տարիներն էին: 1970-ին երկրի բնակչությունը մոտենում էր 4 մլն-ի: Աննախադեպ վերելք էր ապրել գիտությունը, մշակույթը, գրականությունը: Լուծվում էր մարդու համար ամենակենսական հարցերից մեկը՝ գլխին տանիք ունենալու հարցը: Լավ թե վատ, մեր երկրի այսօրվա քաղաքացիների 90 տոկոսն ապրում է խորհրդային երկրից ստացած մի քանի տասնյակ քառ.մ մակերեսով բնակարաններում: Ճիշտ է, բնակարաններ այսօր էլ կառուցվում են, բայց «էլիտար» (նշանակում է ոչ սովորական մահկանացուների համար): Կամ էլ պարիսպների մեջ առնված միջնադարյան դղյակների տեսքով տներ, որոնց մակերեսը քառ.մ-երով չես հաշվի, այլ միայն հեկտարներով: Ընդ որում՝ որպես կանոն դրանք կառուցվում են դժվարությամբ աճեցված այգիների կամ արհեստական անտառների հատված մակերեսների վրա: Տեսնես դրանց տերերը հասցնո՞ւմ են յուրաքանչյուր սենյակում գոնե մեկ անգամ լինել: Այս թեմայով զրույցը շարունակել պետք չէ: Ինչպես ասում են ռուսները՝ и так все ясно.

Եվ դարձյալ արտագաղթի մասին:

Վերջին տարիներին արտասահման, հատկապես արեւմուտք մշտական բնակության մեկնողների թիվը զգալիորեն կրճատվել է: Դրա պատճառը նախ նման հնարավորություն ունեցողների թիվն է կրճատվել եւ հետո էլ՝ երկրում բնակվողների: Ասելս այն է, որ քչացել ենք, այդ պատճառով էլ քիչ էլ մեկնում-գնում են: Նման երեւույթի հետ կարծես համակերպվել ենք: Զարմանալիորեն հարմարվել ենք նաեւ պետական մարմինների անտարբերությանը: Հասկանալի է, որ պետությունը չի կարող բռնություն կիրառել մեկնողների նկատմամբ, ստիպել նրանց չլքել հայրենիքը, թե չէ եվրոպաներում կասեն՝ սահմանափակում եք անհատի ազատությունը: Մեր պետությունն այս իմաստով իրոք իրավական պետություն է: Գնացողներին չենք արգելում, բայց եկողներին ինչպե՞ս ենք դիմավորում: Ինչպես ասում են՝ էլ դու սուս: Մանավանդ, երեկվա մեկնածներին, մանավանդ, եթե նրանք սիրասուն հայրենիք են վերադառնում հյուրախաղերի: Հեռուստաալիքների տերերը շտապում են նրանց հետ հարցազրույցներ անց կացնել՝ չմոռանալով անպայման հարցնել, թե փոփոխություններ տեսնո՞ւմ են, արդյոք, հայրենիքում. մայրաքաղաքի լավագույն դահլիճներն են տրամադրվում նրանց: Դե նրանք էլ գոհ իրենց արած-չարածից, մեր կենսաթոշակի կեսի արժեքով տոմս են վճառում, հայրենասիրության մասին մեզ դասեր տալիս, սիրասուն հայրենիքի մասին երգեր երգում ու ասում, որ մեզ շատ են սիրում, շատ են կարոտում հայրենիքը, գնում են, որ հետ գան: Բա՞:

Չգիտեմ, չեմ հիշում, թե երբ եմ առաջին անգամ լսել կամ կարդացել Հ.Սահյանի «Ախր ես ինչպես վեր կենամ, գնամ» բանաստեղծությունը, բայց լավ եմ հիշում, որ ամեն անգամ այն լսելուց մարմնիս միջով դող էր անցնում, մեջքիս սառնություն էի զգում: Չեմ կարծում, թե այդ իմաստով ես եզակի եմ եղել: Հավանաբար ինձ նման հարյուր հազարներն են եղել: Մեղքս չեմ թաքցնում, բայց այսօր բավականին անտարբեր եմ դարձել: Վատ է, բայց հավանաբար վերեւում հիշատակված հարյուր հազարների մեջ ինձ նմաններ էլի կան: Եվ դրա մեջ հայրենիք-արեւմուտք ճանապարհը ջրաղացի ճամփա սարքածների ու նրանց հովանավորողների մեղքն էլ կա:

Գնում են, ճիպոտը թողնում են կամին ու գնում: Գնում են քաղաքներից, գնում են իրենց հայրենի գյուղից, իրենց երազած հայրենիքի ազատագրված տարածքները թողած՝ գնում են օտարի հողի վրա վար ու ցանքս անելու, օտարի ջաղացին ջուր լցնելու եւ ի վերջո խառնվելու, ձուլվելու նրանց: Հիշում եք, մեր մեծ բանաստեղծուհին ասում է՝ թե մորդ հանկարծ մտքիցդ հանես, քո մայր լեզուն չմոռանաս: Հայրենիքի կորուստը սկսվում է լեզվի մոռացումից, բայց դե մոռանալ կարելի է մի բան, որը գիտես: Չիմացած բանն ինչպե՞ս մոռանաս: Նա, ով ընտանիքի օրվա հացը հոգալու համար է թողել հայրենիքը, դժվար թե կարողանա նման հարցերի մասին մտածել: Այս պրոբլեմը զգալի է հատկապես Ռուսաստան մեկնածների շրջանում: Որպես կանոն այս երկիր է մեկնում մեր հասարակության ամենակարիքավոր մասը, եւ դարձյալ որպես կանոն, մայրենի լեզվի պահպանության դրվածքն էլ հենց ամենաանբավարարը մեր ամենամեծ գաղութում է՝ Ռուսաստանում: Այսօր արեւմուտքում մեծանում է եղեռնից փրկվածների 4-րդ, 5-րդ սերունդը, ի հեճուկս չկամների, նրանց զգալի մասը պահել-պահպանել է մայրենին: Իսկ Ռուսաստան մեկնած, զտարյուն հայկական ընտանիքներում ծնված երեխաները, որոնց ծնողները դույզն- իսկ ասած ռուսերեն չեն կարողանում հայտնի կենդանու գարին երկու տեղ բաժանել, հայերեն խոսել չգիտեն:

Այն, ինչի մասին ես մտածում եմ, համոզված եմ, իմ ընթերցողները վաղուց են իրենց մտքի աղացով անց կացրել, գուցե նաեւ ինձնից լավ:

Մեղքս ինչ թաքցնեմ, մեկ-մեկ մտածում եմ, «անցումային շրջան» ասածն ախր շատ է երկարում: Սա (անցումային շրջանը), ինչպես նաեւ մտորումներիս մեջ ակնարկված թերությունները միայն մեզ համա՞ր են, թե՞ ուրիշ ազգեր էլ են դրանք ապրել: Աչք եմ ածում չորս բոլորս, վայ թե միայն մեզ մոտ է այն երկարում: Մեր հարեւան վրացիները (սատանայի ականջը խուլ) քաղաքացիական պատերազմ տեսան, երկիրը մասնատվեց (սատանայի երկու ականջը խուլ), բայց ասում են, թե լավ են ապրում, եւ երկրում կարգ ու կանոն է:

Ասված խոսք է, թե չի կարելի հարեւանի դժվարություններով ուրախանալ: Ասել է թե՝ պետք է ուրախանանք նրանց հաջողությամբ: Ի վերջո, երբ ազնիվ անունով հայտնի կենդանին թավալ է տալիս, նրա բարձրացրած փոշին նստում է նաեւ մեզ վրա: Այնպես որ «եւս մի քիչ, եւ ամեն ինչ լավ է լինելու»:

■

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ Սյունիքի մարզի «Հրանտ Ոսկանյանի անվան Կապանի թիվ 12 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի անգլերենի, ֆիզկուլտուրայի, տեխնոլոգիայի եւ ՆԶՊ-ի ուսուցիչների թափուր տեղի համար:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր (ըստ ՀՀ ԿԳ նախարարի՝ 2013թ. հունիսի 19-ի N 317-Ա հրամանի հավելված 1-ի) եւ բանավոր (ըստ ՀՀ ԿԳ նախարարի՝ 2013թ. հունիսի 19-ի N 317-Ա հրամանի հավելված 2-ի):

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ձեւ 1),
2. Բարձրագույն կրթության մանկավարժության որակավորման աստիճանը հավաստող ավարտական փաստաթուղթ (դիպլոմ) կամ վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական կամ ուսուցչական գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժը հաստատող քաղվածք աշխատանքային գրքույկից,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (ձեւ 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են մինչեւ 2016թ. փետրվարի 26-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-14:00, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2016թ. մարտի 1-ին, ժամը 14:00-ին Սյունիքի մարզի Հր. Ոսկանյանի անվան Կապանի թիվ 12 հիմնական դպրոցում, հասցեն՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Բարաբաթում թաղ., 2/1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 61 22 90 կամ (0285) 2 47 90 հեռախոսահամարներով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Կապանի թիվ 4 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-Ի աշխարհագրություն /4.25դասաժամ/, ֆիզիկա /2 դասաժամ/, ինֆորմատիկա /3դասաժամ/ ուսուցչի թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբախշման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ձեւ 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (ձեւ 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները(դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ 2016թ. փետրվարի 26-ը, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15: 00-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2016թ. մարտի 1-ին՝ ժամը 14: 00-ին Կապանի թիվ 4 միջնակարգ դպրոցում՝ բ. Վաչագանում: Տեղեկությունների համար զանգահարել 094815798:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ Սյունիքի մարզի Շիկահողի միջնակարգ դպրոցի ֆիզկուլտուրայի (13,5 դասաժամ), հայոց լեզվի (16,5 դասաժամ), գերմաներենի (8 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում.

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ձեւ 1),
2. Փաստաթուղթ(դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն,
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ փետրվարի 26-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 14:00, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի: Մրցույթը տեղի կունենա մարտի 1-ին՝ ժամը 14:00-ին, Շիկահողի միջն. դպրոցում, հասցեն՝ գ. Շիկահող:

Տեղեկությունների համար զանգահարել 093941662 հեռախոսահամարով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ Սյունիքի մարզի Գեղանուշի միջնակարգ դպրոցի հայոց լեզվի եւ գրականության ուսուցչի թափուր տեղի համար: Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում.

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ձեւ 1),
2. Փաստաթուղթ(դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն,
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ փետրվարի 26-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 14:00, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա մարտի 1-ին՝ ժամը 14:00-ին, Գեղանուշի միջն. դպրոցում, Հասցեն՝ գ. Գեղանուշ, Վերին թաղ.4:

Տեղեկությունների համար զանգահարել (0285)2-44-87, 077-76-88-36 հեռախոսահամարներով:

ՈՒՂՂՈՒՄ

Մեր թերթի նախորդ համարի «Հոգու թեւերով» հրապարակման հինգերորդ տողում տնօրեն բառի փոխարեն կարդալ տնօրենի տեղակալ:

Քննարկվեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1325 բանաձեւը

էջ 7

լոր մակարդակներում), պաշտպանություն (հակամարտությունից տուժած կանանց ու աղջիկների՝ իրավունքների ու շահերի պաշտպանություն), օգնություն եւ վերականգնում (կանանց ու աղջիկներին անհրաժեշտ օգնության տրամադրում ե՛ւ հակամարտության ընթացքում, ե՛ւ դրանից հետո, ինչպես նաեւ կանանց՝ որպես օգնության եւ վերականգնման գործակալների, կարողությունների զարգացում):

Անվտանգության խորհուրդը, հետամուտ լինելով բանաձեւի իրականացմանը, իր նախագահական հայտարարություններում կոչ է անում անդամ պետություններին շարունակել իրականացնել 1325 բանաձեւը՝ մշակելով գործողությունների ազգային ծրագիր (ԳԱԾ) կամ կիրառելով այլ մեխանիզմներ: Յուրաքանչյուր պետություն ինքն է որոշում կանանց, խաղաղության եւ անվտանգության օրակարգի իրականացման համար համապատասխան ուղիներն ու մեխանիզմները, այնուամենայնիվ, բանաձեւի ջատագովման կան ընդհանուր եւ լայնորեն կիրառելի մեխանիզմներ եւ գործողություններ, այն է՝ բանակցել եւ խթանել կառավարությանը՝ հանձն առնելու ՄԱԿ-ի ԱԽ 1325 բանաձեւի իրականացումը, թիրախավորել պետական շահագրգիռ պաշտոնյաներին՝ խթանելու քաղաքական կամքի ստեղծմանը եւ բանաձեւի ջատագովմանը, համախմբել պետական կառույցների եւ քաղաքացիական հասարակության ջանքերը, ստեղծել աշխատանքային խումբ՝ գործողությունների ազգային ծրագիր մշակելու համար, խրախուսել գենդերային հավասարությունը եւ նպաստել կանանց ներգրավվածությանը քաղաքականության մշակման եւ որոշումների կայացման գործընթացներում եւ այլն:

ԳԱԾ-ը գործիք է կառավարության համար ազգային մակարդակում համակարգելու ՄԱԿ-ի ԱԽ 1325 բանաձեւի իրականացումը, դրա մշտադիտարկումն ու գնահատումը: Այն ավելի համակարգված է դարձնում պետական եւ ոչ պետական մարմիններում աշխատող կանանց, խաղաղությանն ու անվտանգությանն ուղղված գործունեությունը: Ի դեպ, դրա մշակումն ու իրականացումը շարունակական եւ փոփոխվող գործընթաց է, որը տեղի է ունենում իրավիճակի եւ կարիքների փոփոխության համապատասխան:

> *Բանաձեւի իրականացման հնարավոր շահագրգիռ կառույցները պետական մարմիններից պաշտպանության, արդարադատության, արտաքին, ներքին գործերի նախարարությունները, դատախազությունը, ազգային անվտանգության ծառայությունը, ոստիկանությունն ու զինված ուժերն են, ինչպես նաեւ ՄԱԿ-ի համապատասխան կառույցները, միջազգային, ազգային ու տեղական կառույցներն ու կազմակերպությունները: Ամեն գերատեսչություն, ըստ իր պլանի, կկատարի համապատասխան առաջադրանքները:*

Կանանց առաջընթացի հարցերով ՄԱԿ-ի գիտահետազոտական եւ վերապատրաստման միջազգային ինստիտուտի՝ ՄԱԿ-ի 1325 բանաձեւի իրականացման ուղեցույցն առաջարկում է ԳԱԾ-ի մշակման վեց փուլ՝ քաղաքական կամքի ձեւավորում՝ իրազեկվածության բարձրացում եւ ջատագովում, ինքնակազմակերպում, ծրագրի մշակում, կանանց, խաղաղության եւ անվտանգության գնահատում, հանդիպումների եւ դասընթացների ծրագրում եւ գործողությունների ազգային ծրագրի ստեղծում:

Անուշ Խաչատրյանը ներկայացրեց նաեւ Հայաստանի Հանրապետությունում ընտանեկան բռնությունների, տարբեր ոլորտներում կանանց ներգրավվածության վերաբերյալ վիճակագրական տվյալներ: Կլոր սեղանն ընթացավ ակտիվ քննարկման մթնոլորտում:

Հ.Գ. *Նյութը պատրաստելու համար օգտվել ենք ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1325 բանաձեւի ջատագովման ուղեցույցից:*

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ «Սյունյաց երկրի» խմբագրակազմը ցավակցում է Գայանե Բաղդասարյանին՝ քեռու դստեր՝ սիրելի եւ անմոռանալի Ջեմմայի անժամանակ մահվան կապակցությամբ:

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ **(0285) 5 25 63,**
(091) 45 90 47,
(077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ»
բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500 000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1791, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 29.01.2016թ.: